

Ալեքսան Յ. Յակոբեան
Պատմ. գիյ. թեկնածու.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԷԹՆՈՀԱՄԱԽՄԲՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ*

Մուտք

Հայ էթնոսի (ժողովրդի) կազմաւորմանը նուիրուած վերջին շրջանի առաւել յաջողուած գործերը, մեր կարծիքով, Յովհ. Կարապետեանի և Մաքսիմ Կատուալեանի աշխատանքներն են¹: Դրանք նախ գիտական պատշաճ ամբողջականութեամբ էին յենում Թամազ Գամկրելիձէի և Վեաչ. Իւանովի յայտնի լեզուաբանական տեսութեան վրայ²: Բացի այդ նրանց լուսահոգի հեղինակները շատ թէ քիչ ծանօթ էին նաև էթնիկ գործընթացների օրինաչափութիւնների մասին 1960–1980–ական թթ. խորհրդային ազգագրութեան կողմից հիմնաւորապէս մշակուած տեսութեանն ու մերթողաբանոյթանը (**Յուլիան Բրոնկէ, Սերգէյ Տոկարև, Վիկտոր Կոզլով, Սերգէյ Հարութիւնով, Նիկ. Չերոքսարով** են)³:

* Յղուածն ընդունուել է տպագրութեան 31.01.2013:

1 Տե՛ս **Օ. Օ. Կարազեյան**, *Проблема этногенеза и самоназвания армянского народа по клинописным источникам*, – ВОН, 1988, N 7, с. 57–76; նոյնի՝ *Հայկական լեոնաշխարհը սեպագիր արիւրներում*, հտ. 1, գիրք 1. *Սեպագիր փեղանոններ (Արարապում և յարակից նահանգներում)*, Եր., 1998; **Մ. Կատուալեան**, *Ուրարու*, –ՀՍՀ, հտ. 12, Եր., 1986, էջ 276–280; նոյնի՝ *Процесс образования первого единого государства на Армянском нагорье и слияния аборигенных племен в IX–VI веках до н. э.*, Автореф. дисс. канд. ист. наук, Ер., 1980; նոյնի՝ *Ուրարու «աշխարհի» բնօրրանի փեղրոշման շրջ*, –ԲԵՀ, 1992, N 1, էջ 90–102:

2 Տե՛ս **Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов**, *Индоевропейские языки и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры*, Т. I–II, Тбилиси, 1984; **В. В. Иванов**, *Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агну*, –ИФЖ, 1983, N 4, с. 22–43.

3 Տե՛ս **С. А. Токарев**, *Проблема типов этнических общностей (К методологическим проблемам этнографии)*, – “Вопросы философии”, 1964, N 11, с. 43–53; **В. И. Козлов**, *О понятии этнической общности*, – “Советская этнография”, 1967, N 2, с. 100–111; նոյնի՝ *Проблема этнического самосознания и ее место в теории этноса*, – “Советская этнография”, 1974, N 2, с. 79–92; **Н. Н. Чебоксаров**, *Проблемы типологии этнических общностей в трудах советских ученых*, – “Советская этнография”, 1967, N 4, с. 94–110; **С. А. Арутюнов, Н. Н. Чебоксаров**, *Передача информации как механизм существования этносоциальных и биологических групп челове-*

Այդ ազգագրական դպրոցի փայլուն ներկայացուցիչներից մէկի՝ ակադեմիկոս Յու. Բրոնսլեյի բնորոշմամբ՝ էթնոսը «կարող է սահմանուել որպէս որոշակի տարածքում պատմականօրէն ձևաորուած՝ մարդկանց միջսերնդային կայուն համախումբ, որն ունի ոչ միայն ընդհանուր գծեր, այլև մշակոյթի (ներառեալ լեզուն) և հոգեբանութեան համեմատաբար հաստատուն [ստաբիլ] առանձնայատկութիւններ, ինչպէս նաև իր միասնութեան և բոլոր այլ նմանատիպ կազմաորումներից տարբերութեան գիտակցութիւն (ինքնագիտակցութիւն)՝ արձանագրուած ինքնանուանման (էթնոնիմի) մէջ»⁴: Ցաւօք, այս տեսութիւնը ցայսօր անծանօթ է մնում շատ հայագէտների (ուրև տեսական պատկերացումների հիմքում, կարծեք, դեռ Ֆ. Էնգելսի դրոյթներն են)⁵: Նշենք նաև բացառութիւնները՝ Հրանոյշ Խառատեան, Մերուժան Կարապետեան և լուսահոգի Համբարձում Գալստեան, որոնց, ի դէպ, պարտական ենք հայերէն համապատասխան եզրութարանութեան մեծ մասի համար⁶:

ства, – «Расы и народы», Вып. 2, Москва, 1972, с. 8–30; **Крюков М. В.** 1976 – *Эволюция этнического самосознания и проблема этногенеза*, – «Расы и народы», Вып. 6, Москва, с. 42–63; **Ю. В. Бромлей**, *Этнос и этнография*, Москва, 1973; նոյնի՝ *Очерки теории этноса*, Москва, 1983; **С. А. Арутюнов**, *Классификационное пространство этнической типологии*, – «Советская этнография», 1986, N 4, с. 58–63.

4 **Ю. В. Бромлей**, *Очерки теории этноса*, с. 57–58: Հարկ է նշել, որ այս տեսութիւնը ցայսօր մասնագիտական շրջանակներում որևէ լուրջ վիճարկում չի յարուցել, եթէ հաշուի չառնենք էթնոսի մասին կոնստրուկտիվիստական՝ առանձնապէս մեծ հեղինակութիւն չվայելող մօտեցումները: Վերջիններիս գործնական օրինակները, այդ թում՝ խորհրդային շրջանում «ադրբեջանցի» էթնոսի արհեստական «կառուցման» (կոնստրուկցիայի) քաղաքական առնուագն վաթսունամեայ ծրագրերն, ինչպէս յայտնի է, պայթեցին, անորոշութեան ու ձգնաժամի մէջ թողնելով Ադրբեջանի թիրաբախօս համայնքի էթնիկ ինքնութիւնը (տես **Հ. Խառատեան**, «*Ադրբեջանցիները*», «*կովկասալեզուները*» և «*իբանալեզուները*», *ինքնութեան զարգացումներն Ադրբեջանում*, – «Հանդէս Ամսօրեայ», ՃԻՋ տարի, Վիեննա-Եր., 2012, սն. 271–334): Առիթն օգտագործում ենք՝ ջերմ երախտագիտութիւն յայտնելու Հրանոյշ Խառատեանին, ով մեծապէս մասնակցել է ներկայ յօդուածի խմբագրմանը և մասնագիտական սրբագրմանը:

5 Հմմտ.՝ «Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского нагорья и сопредельных областей» (Եր., 1990, այսուհետև՝ МИКЭАНСО) ժողովածոյի մէկ տասնեակից աւելի յօդուածները կամ Լաւր. Բարսեղեանի 1996 թ. «Հայ ժողովրդի ծագման և կազմաորման հարցերը պատմագիտութեան մէջ»՝ անկախ այս թերիից օգտակար մենագրութիւնը, որը 2 տարի անց պաշտպանուեց նաև որպէս դոկտորական աշխատանք:

6 Տես **Г. Аракелян (Харатян)**, *Черкесогая (историко-этнографическое исследование)*, – «Кавказ и Византия», вып. 4, Ер., 1984, с. 28–129; **Հ. Խառատեան**, *Ուղիների էթնո և դասնական ինքնապարկանելիութեան որոշ հարցեր (ժԹ-ի դդ.)*, – «Հայկազեան հայագիտական հանդէս», Հտ. Ի, Պէյրութ, 2000, էջ 183–206; **Մ. Մ. Կարապետեան**, *Երևանի քննաչորեան էթնիկական կազմի և թուարանակի փոփոխութիւնները 1600–1724 թթ.*, – ՊԲՀ, 1986, N 2, էջ 95–109; նոյնի՝ *Բնակչութեան էթնիկ կազմը և էթնիկ պրոցեսները Երևանում 1724–1800 թուականներին*, – ՊԲՀ, 1987, N 3, էջ 95–103; **Հ. Փ. Գալստեան**, **Ա. Յ. Յակոբեան**, *Էթնալեզուական գործընթացները Բուն Ադուսնում*, – «Հայերէնագիտական միջազգային երկրորդ գիտաժողով», Ջեկուցումների դրոյթներ, Եր., 1987, էջ 92–93; **A. Akopyan, H. Galstyan**, *Concerning the Study of ethnic Processes in the Caucasian Albania (Antiquity and Early Middle Ages)*, – 12th International Congress of Anthropological and Ethnological Sciences, Zagreb, 1988 (USSR Academy of Sciences, N. N. Mikloukho-Maklay Institute of Ethnography), Moscow, 1988, p. 1–12 (վերահրատ.՝ **Հ. Գալստեան**, *Յօդուածներ, յուշագրութիւններ, հարցազրոյցներ...*, Եր., 2002, էջ 90–98, 147–157):

1. Էթնոճուլախառնում – էթնոմիքսացիա

Ըստ Յովհ. Կարագեօզեանի և Մաքսիմ Կատուալեանի հետազոտությունների՝ հայ էթնոսի (ժողովրդի) կազմաւորումն ընթացել է նոր էթնոսների առաջացման երեք հիմնական ճանապարհներից երկրորդով՝ **էթնոհամախմբում – էթնոկոնսոլիդացիա**, ընդ որում՝ վերջինիս **էթնոճուլախառնման – էթնոմիքսացիայի** տարբերակով (հայագէտներին՝ ցաւօք, առաւել անձանօթ): Ուրեմն՝ ո՛չ պարզ **էթնիկական մասնատման – էթնոսեպարացիայի** ճանապարհով (ինչ եղանակով առաջացել են, օրինակ՝ նախահայերէնի կրող ցեղային էթնոսները՝ անջատուելով–մասնատուելով վաղ հնդեւրոպախօս էթնիկ ընդհանրությունից), և ո՛չ էլ՝ **էթնոէվոլյուցիայի**, որը շրջակայ էթնոսների տեական կլանման–ուծացման–ասիմիլիացիայի եղանակն է: Ըստ Յու. Բրոնլեյի և միւս ազգագրագէտների՝ էթնոճուլախառնումը (էթնոմիքսացիան) էթնոսի կազմաւորման այն տարբերակն է, որի դէպքում էթնոհամախմբումն (էթնոկոնսոլիդացիան) ընթանում է միմեանց ոչ ազգակից էթնոսների միջև. ազգագրագէտ–տեսաբաններն այդ տարբերակի վերլուծությունը տալիս են իտալական, անգլիական, ֆրանսիական, հունգարական, բուլղարական և ուրիշ էթնոսների կազմաւորման օրինակների վրայ⁷:

Յովհ. Կարագեօզեանը, Մ. Կատուալեանը և որոշ այլ ուսումնասիրողներ ցոյց են տալիս, որ հայ էթնոսի (ժողովրդի) կազմաւորումն ընթացել է **Քիաինելէ**⁸ պետութեան մէջ (կոչուած նաև՝ **Ուրարտու**, **Ուրաշտու**, **Արարատ** են, իսկ Ք. ա. է–Ջ դդ.՝ արդէն նաև **Արմենիա–Արմինա**) միաւորուած գրեթէ ողջ Հայկական լեռնաշխարհի՝ մինչ այդ առանձին ցեղային–ցեղախմբային կայուն ինքնագիտակցութիւն ու ինքնանուանումներ ունեցած աւելի մանր էթնոմիաւորների շրջանում: Ընդ որում՝ դրանք են հնդեւրոպախօս էին (նրանց թում մի քանիսը՝ «տեղաբնիկ»⁹ նախահայախօս,

7 Տե՛ս *Очерки общей этнографии: Зарубежная Европа*, Москва, 1966; *Национальные процессы в Центральной Америке и Мексике*, Москва, 1974; **Ю. В. Бромлей**, *Современные проблемы этнографии*, Москва, 1981, с. 257–273; նոյնի՝ *Очерки теории этноса*, с. 237–243, 281–284, 287–290, 332–333.

8 Եզրոյթների հարցում հետևում ենք Յովհ. Կարագեօզեանին, որը գրում է. «վերջին շրջանում գիտութեան մէջ առաւել տարածուած **ուրարտերէն, ուրարտական, ուրարտագէտ** եզրերի փոխարէն մենք օգտագործում ենք **քիաիներէն, քիաինական, քիաինագէտ** եզրերը: Գրանով մենք առաջին հերթին հետևում ենք սեպագրի լեզուն կրող էթնիկական խմբին, որն իր լեզուով իր երկիրը կոչում է **Քիաինելէ** (^{KUR}Biainele), իսկ իրեն՝ **քիացի** (^{KUR}Biaine): Ցանկացած ժողովրդին իր ինքնանուամբ կոչելը թէ՛ աւելի գիտական է, թէ՛ աւելի բարոյական ու ընդունելի: Բացի այդ, մենք յուսով ենք, որ այսպիսով վերջապէս կը հեշտանայ թէ՛ գիտութեան, թէ՛ առօրեայ մտածողութեան մէջ **Ուրարտու, ուրարտական** եզրերի բազմիմաստութեան ընկալումը (օրինակ՝ շատ բնագրերում **Ուրարտու (Ուրաշտու) և Արմենիա (Արմինա)** եզրերը փոխարինում են իրար, այնինչ ոչ մի տեղ չունենք **Քիաինելէ – Արմենիա** գուգահեռ): Եւ, վերջապէս, մենք հնարաւոր ենք համարում սեպագրի լեզուն կրողների էթնոսը բնորոշող **քիացի** եզրի հիման վրայ **քիաինացի, քիաիներէն, քիաինական** աւելի բարեհունչ եզրերն օգտագործելը՝ նկատի ունենալով սեպագիր լեզուի **–ինէ** ածանցի **–ն** հնչյունի պահպանումը հայերէնում (օրինակ՝ **Ալգե–Ալգինե–Աղծնիք**): Տե՛ս՝ **Յ. Կարագեօզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 10, ծնթ. 10:

9 «Տեղաբնիկութիւն» և «եկուորութիւն» եզրոյթներն օգտագործում ենք բացառապէս պայմանականօրէն (միշտ՝ չակերտներում), զգուշանալով պատմական գիտութեան հետ ոչ մի կապ չունեցող, բայց բաւականին շրջանառու այն մտայնությունից, երբ էթնոսների կամ նրանց բաղադրիչների տեղաշարժերը հիմք են դառնում նրանց արժանացնելու ինչ–ինչ

միւնները՝ «տեղաբնիկ» լուվիախօս¹⁰, իրանախօս¹¹, ինչպէս նաև «եկուոր»՝ թրակա-փոիգախօս – «մուշկախօս»¹²), եւ խոտի-բիախնախօս¹³ («եկուորութեան» խնդիրը՝ քննարկելի¹⁴), եւ, թերևս նաև՝ սէմախօս ու կովկասախօս¹⁵ (այդ ցեղային էթնոսները մեծ թուով յիշուած են Ք. ա. Գ-Ա հազարամեակների ասորեստանեան, խեթական, միտանական և բիախնական սեպագիր ու գաղափարագիր աղբիւրներում): Նշուած էթնոճուլախառնման (էթնոմիքսացիայի) գործընթացում ձևաւորուած ընդհանուր՝ արդէն վերցեղային ու կայուն ինքնագիտակցութեամբ էթնոսը (ժողովուրդը) ընդունել է դեռևս քննարկելի ստուգաբանութեամբ ***հայո-** (>**հայ**) ինքնանուանումը (**էթնոնիմ**, **էնդոէթնոնիմ**) և երկրի տարածքում ծաւալային առաւել գերակշռութիւն ունեցած՝ **նախահայերէնի** բարբառներով խօսող ցեղերի լե-

«գնահատականների»:
10 Հիմնականում՝ աշխարհացոյցեան Բարձր Հայքում, Ծոփքում և Փոքր Հայքում:
11 Հիմնականում՝ Արաքսի ստորին հովտում և յարակից շրջաններում:
12 Աշխարհացոյցեան Մոկս նահանգում և որոշ այլ շրջաններում (հմմտ. **Ս. Տ. Երեմեան**, *Հայկական առաջին պերսական կազմաւորումները (VII-VI դդ. մ. թ. ա.)*, – ՊԲՀ, 1968, N 3, էջ 92; **Ս. Գ. Պետրոսեան**, *Թրակա-կիմերական ցեղերի միութիւնները Հայկական լեռնաշխարհում (մ. թ. ա. VI-V դդ.)*, – ՊԲՀ, 1977, N 1, էջ 207-220): Այս լեզուների և հայերէնի ազգակցութեան խնդրի վերաբերեալ, որը ժամանակին հայերին Բալկաններից տեղափոխուած էթնոս համարելու՝ ակնառու թուացող պատճառներից է եղել, կարևոր է արդէն Իգոր Դեակոնովի զգուշատր եզրայանգումը. «Լեզուաբանական տունայնթերը ցոյց են տալիս, որ փոիգերէնը և հին հայերէնը զգալիորէն աւելի վաղ են բաժանուել՝ հեռանալով ընդհանուր հիմք-լեզուից. հին հայերէնը թրակա-փոիգական ձիւղի առանձին լեզու է, այլ ոչ թէ փոիգերէն լեզուի բարբառ»: Տես **И. М. Дьяконов**, *Предыстория армянского народа*, Ер., 1967, с. 208: Իսկ Վեաջ. Իւանովը լրիւ է մերժում նման ազգակցութիւնը. «Ներկայումս հնդեւրոպարանների մէջ բաւարար համերաշխութիւն գոյութիւն ունի այն բուն լեզուաբանական փաստարկների վերաբերեալ, որոնք խօսում են յօգուտ համահնդեւրոպական գործառնամարզի (արեւալի) ներսում հնդ-իրանա-յունա-հայկական բարբառային մարզի անջատման: Աուգմենտային գործառնամարզի մէջ նախահայերէնը մտնում էր հնդ-իրանականի, յունարէնի և փոիգերէնի հետ միասին»: Տես **В. В. Иванов**, *Выделение разных хронологических слоев в древнеармянском*, с. 22, հմմտ. նաև նոյնի՝ *О взаимодействии индоевропейских и северокавказских диалектов в ареале Армянского нагорья ок. III-I тыс до н. э.*, – МИКЭАНСО, Ер., 1990, с. 137-144.
13 Հայկական լեռնաշխարհում խոտիախօս բնակչութեան տեղորոշման առումով ուշագրաւ է թում (թէլե՝ դեռ քննարկելի) **խոտի** ցեղանուան (հայ. Աստուածաշնչում՝ **Քոռացիք**) համադրումը Հայկի **Խոռ** որդու անուան հետ, որից ծագած են դիտուել **Խորխոռուիք** տոհմը (նաև՝ **Մաղխագունի**) և գաւառը (**Ա. Ե. Петросян**, *Армянский эпос и мифология. Истоки. Миф и история*, Ер., 2002, с. 63, 193). վերջինս, ըստ մեզ՝ գտնուել է Արածանիի վերին ձախ վտակ **Մաղխագի** հովտում: Յովի. Կարագեօզեանը Սրմանց-Բիւրակն (ուշ՝ **Բինգեօլ**) լեռան սեպագիր *Նուրանաշէ* (⁶²Nu-ba-na-a-še) անունը ստուգաբանում է իբրև խոտիերէն Nube – «բիր» + anaše – «աղբիւր, ակն» (**Յ. Յ. Կարագեօզեան**, *Սեպագիր աղբիւրների Դարանու երկիրը*, – ԼՀԳ, 1978, N 6, էջ 88-90; նոյնի՝ *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 48):
14 Խոտի-բիախնական լեզուների մասին գիտութեան մէջ կայ երկու հիմնական տեսակէտ: Ըստ Ի. Դեակոնովի ու նրա հետևորդների՝ դրանք ազգակից են Կովկասեան ընտանիքի նախաձա-դաղստանեան լեզուախմբին և Հայկական լեռնաշխարհ են թափանցել Ք. ա. Գ հազ.՝ դաղստանեան ցեղերի տեղաշարժի շնորհիւ (**И. М. Дьяконов**, *Древние языки Малой Азии*, Москва, 1980, с. 105; նոյնի՝ *Хуррито-урартский и восточнокавказские языки*, – «Древний Восток», N 3, Ер., 1978, с. 25-38; **I. M. Diakonoff, S. A. Starostin**, *Hurro-Urartian as an Eastern Caucasian*, München, 1986; **И. М. Дьяконов, С. А. Старостин**, *Хуррито-урартские и восточнокавказские языки*, – Древний Восток: этно-культурные связи, Москва, 1988, с. 164-207): Իսկ Գևորգ Զահուկեանի կարծիքով՝ դրանք պատկանում են մի առանձին՝ Միկենէ-փոքրասիական լեզուաընտանիքի (նրա մէջ մտել է նաև էտեոկիպերէնը), որը նստրատիկ ազգակիցն էր Հնդեւրոպական և Կովկասեան լեզուաընտանիքների (**Г. Б. Джаукян**, *К интерпретации этеоитрско-греческой билингвы*, – «Изв. АН СССР», серия литературы и языка, 1976, N 2, с. 155-163; նոյնի՝ *Этеоитрский язык*, Москва, 2000; **Բ. Ն. Առաքելեան, Գ. Բ. Զահուկեան, Գ. Խ. Սարգսեան**, *Ուրարտու – Հայաստան*, Եր., 1988, էջ 132-134):
15 Հայկական լեռնաշխարհի ծայր հարաւում և ծայր հիւսիսում:

զուն¹⁶, աւելի ճիշտ՝ թերևս, նրա՝ խոտի-բիաինական բաղաձայնական համակարգով հարստացած միջցեղային կոյնէն¹⁷ (այս կամ այն չափով կանոնակարգուած Վանի շրջակայքում, այսինքն՝ բիացիների միջավայրում), որն այդ պահից, ըստ լեզուաբանների, կարող է կոչուել **հայերէն**: Տուեալ առումով հմտ. նաև Ի. Դեակոնովի ամփոփումը. «Երբ եկաւ այստեղ բազմալեզու ցեղերի՝ մէկ ժողովուրդ դառնալու պահը, այդ ժողովուրդին միաւորող լեզուն, լիովին բնականաբար, դարձաւ հէնց և միմիայն նախահայերէնը... Բազմալեզու ցեղերի միախառնման ընդհանուր լեզու էր դառնում ոչ թէ նուաճողների լեզուն, այլ առաւել տարածուած լեզուն... Ասորեստանեան տէրութեան մէջ՝ արամէերէնը, Հռոմէական կայսրութեան արևելքում՝ յունարէնը, Ուրարտում՝ նախահայերէնը»¹⁸: Տասնեակ սեպագիր տեղանունների լեզուաբանական քննութեան շնորհիւ Բիաինելի գլխաւորապէս կենտրոնական, հիւսիսային և արևելեան շրջաններում հայերէնի (նախահայերէնի) գերակշիռ առկայութիւնը մեծապէս փաստարկած Յովհ. Կարագեօզեանը¹⁹, ըստ էութեան՝ յենում էր հէնց իր ուսուցիչ Իգոր Դեակոնովի այս հիմնարար դրոյթի վրայ (թէպէտ և՛ ոչ մինչև վերջ մշակուած):

Մանրամասնենք, որ այսօր **հայ** (<***հայո-**) եզրոյթի համար առաւել հիմնաւորուած ստուգաբանութիւն կարելի է համարել Յովհ. Կարագեօզեանի և Արմէն Պետրոսեանի կողմից փաստարկուածն, ըստ որի այդ էթնանունը բխեցում է բիաինական բնագրերում բազմիցս յիշուած **Եթիու/Էթիու** <

16 Որ Ուրարտական պետութեան մէջ բիաիներէն լեզուի կրողները չէին գերակշռում, ժամանակին նկատել են արդէն Իգոր Դեակոնովը (*Խեթերը, փոխգիացիները և հայերը*, – ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», Հաս. գիտութիւններ, 1956, N 11, էջ 75. «Կասկածից դուրս է, որ արդէն 8-7-րդ դդ. Փոքր Հայքի և Մեծ Հայքի արևմտեան մասի հայախօս բնակչութիւնը պէտք է հզօր և միատարր զանգուած հանդիսանար, որով միայն և կարելի է բացատրել այն փաստը, որ Հայկական բարձրավանդակի մանր ցեղերի և ժողովուրդների միաձուլման ընթացքում... յաղթանակեց հայերէնը, դուրս մղելով հին /այդ թում և գրաւոր/ տրադիցիա ունեցող խորրիներէնը և ուրարտերէնը [իմա՝ բիաիներէնը – Ա. Յ.]» և Բորիս Պիտարովսկին (*О происхождении армянского народа*, Եր., 1945, с. 7. «Ո՛չ ուրարտացիները [իմա՝ բիացիները], ո՛չ ասորեստանցիները [իմա՝ աքքադացիները] իրենց պետութիւններում չէին ներկայացնում բնակչութեան մեծամասնութիւնը, և նրանց սեփական մշակոյթն ու լեզուն լոկ պաշտօնական պետական բնոյթ ունէին»): Ասորեստանցիների առիթով հմտ. «Այստեղ [մշտնորում] աքքադերէնի ասորական բարբառն արդէն VIII-VII դդ. դուրս մղուեց արամէերէն լեզուի կողմից, որն, ըստ երևոյթին, Ասորեստանի գիւղական բնակչութեան հիմնական լեզուն էր» (**И. М. Дьяконов**, *История Мидии от древнейших времен до конца IV века до н. э.*, Москва-Ленинград, 1956, с. 312).

17 Տես Հր. Աճառեանի հետեւեալ միտքը. (*Հայոց լեզուի պատմութիւն*, I մաս, Եր., 1940, էջ 185-186) «Հայերէնի ձայնական դրութեան ձևաւորումը առանձնապէս պարտական ենք խալդերէնին [իմա՝ բիաիներէնին – Ա. Յ. – հայերէն բաղաձայնների հնգեակ խումբը՝ բաղկացած իւրաքանչիւր երեք անդամից (բ, պ, փ և այլն)... հաւանաբար նաև խալդերէնի հետ նոյն է»։ Հմտ. նաև Ի. Դեակոնովի դիպուկ արտայայտութիւնը. «Բնորոշ է հայերէնի հնչիւնաբանութեան մօտիկութիւնը ուրարտերէնի [իմա՝ բիաիներէնի] հետ: ... ինչպէս լինում է սովորաբար, երբ մի ժողովուրդ երկլեզուութեան երկարատև ժամանակաշրջանից յետոյ նոր լեզու է ընդունում... այդ ժողովուրդը պահպանում է իր հնչիւնաբանութիւնը... սեփական առոգանութիւնը (արտասանական հիմքը [արտիկուլեացիոն բազան] կամ, կենցաղային լեզուով ասած՝ «ակցենտը»)» (**И. М. Дьяконов**, *К праистории армянского языка (о фактах, свидетельствах и логике)*, – ИФЖ, 1983, N 4, с. 155, հմտ. նոյնի՝ *Предыстория армянского народа*, с. 231-232; *Hurro-Urartian Borrowings in Old Armenian*, – «Journal of the American Oriental Society», Vol. 105/4, 1985, p. 597-603. տես նաև **Մ. Խաչիկեան**, *Խոտի-ուրարտա-հայկականը*, – ՄՄԱԵԺ, XX, Եր., 2001, էջ 265-269):

18 **И. М. Дьяконов**, *К праистории армянского языка*, с. 170.

19 Յ. Յ. Կարագեօզեան, Արևելեան Հայաստանի ուրարտական տեղանունները, – ԼՀԳ, 1978, N 10, էջ 55-76; նոյնի՝ Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում... են:

***Եթիո** տեղանուն-ցեղանունից (լեզուական **Եթիու** < ***Եթիո** > ***Աթիո** > ***Հաթիո** > ***Հահիո** > ***Հայիո** > ***Հայյո** > ***Հայո** > ***Հայոք** > **Հայք** անցումներով)²⁰, որի տարածքային ընդգրկումը մտաւորապէս համընկնում է հետագայի Մեծ Հայքի Այրարատ նահանգի և յարակից հիւսիսային ու արևելեան շրջանների հետ: Ճիշտ է, դեռևս ստուգաբանութեան կարօտ է մնում ինքը՝ ***Եթիո** էթնիկական անունը, բայց իբրև վարկած՝ կարելի է մտածել նրա հիմքում՝ խուռիերէնում վկայուած **եսի-եսո**-ի լինելու հնարաւորութեան մասին, որի իմաստն է «անձ», «մարդ»²¹: Այդ դէպքում հնարաւոր է նաև որոշակի կապ տեսնել **Այր-արատ** – **Ար-արատ** (աքքադերէն բնագրերում՝ **Ուրարտու**, ուղղական հոլովածն, որի կոչականը պիտի ընկալուէր՝ ***Ուրարատ-Արարատ**) տեղանունն «այր» բաղադրիչի հետ, որը հայերէնով (բնիկ հայերէն բառ, սեռ. **առն**, գործ. **արամբ**, յոգն. **արք**), փաստօրէն, նոյն իմաստն ունի («արու մարդ», «ամուսին, էրիկը», «արի, քաջ, կարիճ», հոմանիշը՝ «մարդ»)՝²²: Այս տարբերակի հանրայայտ զուգահեռն ունենք հնդ-իրանական աշխարհում, որտեղ նոյնիմաստ **արի** (սանս. *ari, ārya*) եզրոյթը («մարդ», «այր», «քաջ») հիմք է ծառայել բազմաթիւ ցեղանունների ու տեղանունների, այդ թում՝ հնդ-իրանալեզուների ընդհանուր ինքնանունն («արիացիներ») ստեղծման համար²³:

Տեղին նշենք, որ «**Ա(յ)րարատ** անունն առաջին մասը արիների հետ կապելու փորձը իբրև «արիների դաշտ» կատարել է արդէն Վիլիելմ Այլերսը²⁴: Գ. Զահուկեանը, թեթևօրէն «անհաւանական» համարելով նրա վարկածը, փորձում է այլ հայերէն մեկնութիւն տալ «ուրարտ. **Urartu** – հայ. **Ա(յ)րարատ** և երբ. *Urārat – Arārat*» անունաւածներին²⁵ և կապում դրանք «հ.-ե. ***pro-** «առաջա-» ձևից եկող ***որ(ո)**– կամ ***որ(ու)**–» տարրի ու բնիկ հայերէն **արտ** (սեռ. **արտոյ**) բառի հետ, «վերականգնելով **Uruatri/Urartu** ձևերի համար «առաջադաշտ» ընդհանուր իմաստը»²⁶: Իսկ **Ա(յ)**

20 Տե՛ս **Յ. Կարազեղզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 173–176; **Ա. Ե. Պետրոսեան**, *Նախահայերէնի կրողների տեղայնացման հարցի շուրջը*, – «Երիտ. լեզուաբանների հանրապետական գիտ. կոնֆերանս», Ջեկուցումների դրոյթներ, Եր., 1984, էջ 32–34; նոյնի՝ *Армянские этнонимы в свете мифологических данных*, – МИКЭАНСО, Ер., 1990, с. 241; նոյնի՝ *Армянский эпос и мифология*, с. 189: Հմնտ. նաև առաջինի մի սրամիտ վարկածը (էջ 215–216), ըստ որի հնարաւոր է **Եթիունէ**-ի յիշատակումը ենթադրել Մովսէս Խորենացու այն աղբիւրում, որի տեղեկութիւնը Ա, 19 գլխի շարադրանքում վերածուել է Տրոյական պատերազմի մասնակիցների թում իբրև թէ ինչ-որ «**Եթովկացի** զօրք»-ի յիշատակման: 21 Խորհրդատութեան համար երախտագիտութիւնս եմ յայտնում բիաինագէտ Երուանդ Գրեկեանին:

22 Տե՛ս **Հր. Աճառեան**, *Հայերէն արմարական բառարան*, հտ. Ա, Եր., 1971, էջ 172–174:

23 Ընդհանրապէս, «մարդ» բառը տարբեր լեզուներում յաճախ է օրինաչափօրէն վերածուում ինքնանունն (էնդոէթնոնիմ) կամ արտանունն (էքզոէթնոնիմ)՝ բազմաթիւ էթնոսների համար նշանակելով եւ ինքն իրեն այդպէս կոչելը, եւ ուրիշների կողմից այդպէս կոչուելը (հմնտ. **Я. В. Чеснов**, *Ранние формы этнонимов и этническое самосознание*, – «Этнография имен», Москва, 1971, с. 7–12).

24 Տե՛ս **W. Eilers**, *Geographische Namengebung in und um Iran*, München, 1982 (Sitzungsberichte der Bayerischen Akademie der Wissenschaften, Philos.-Hist. Klasse, Hb. 5), S. 28 (յղում ենք ըստ՝ **Բ. Ն. Առաքելեան**, **Գ. Բ. Զահուկեան**, **Գ. Խ. Սարգսեան**, *Ուրարտու – Հայասրան*, էջ 165): Մի մօտիկ դիտարկում (**arjo* – *Այր-այր-ատ) տե՛ս **А. Е. Петросян**, *Армянские этнонимы в свете мифологических данных*, с. 242.

25 Տե՛ս **Բ. Ն. Առաքելեան**, **Գ. Բ. Զահուկեան**, **Գ. Խ. Սարգսեան**, *Ուրարտու – Հայասրան*, էջ 163–167:

26 Նոյն տեղում, էջ 165: Ի դէպ, եթէ հետևելով Գ. Զահուկեանին՝ հրաժարուենք բնիկ հայերէն **այր** (<հնլս. **ar*°/°*s* > **առն**) բառը **Այրարատ-Արարատ**-ի հիմքը համարելուց, դա դեռևս չի

րարատ-ի համար նա գրում է. «**Urartu**-ի դիմաց առկայ **Ա(յ)րարատ/Արարատ** ձևերի համար մենք ենթադրում ենք մի կողմից՝ **o>a** անցում կամ **o/a** հերթագայություն և սրա հետևանքով ծագած **Ar**-ի վերափոխաստատումը **ար-/այր-** «մարդ» արմատի ազդեցությամբ..., միև կողմից՝ **արտ** (***ածրո-** >**ատրո**) և **արատ** (**արած-** արմատի տարբերակի) բառերի բաղարկություն (խառնում): Հետաքրքրական է նշել, որ Մովսես Խորենացին **Ա(յ)րարատ** անունը կապում է Արայի անունի հետ և մեկնում որպես «Արայի դաշտ», «Գայ հասանէ տագնապաւ ի դաշտն Արայի, որ և յանուն նորա անուանեալ Այրարատ» (ձեռագրական տարբերակներ՝ **Արարատ, Արարադ**)»²⁷:

Յովհ. Կարազեօզեանը **Ուրարտու** անունը կապում է «առայժմ անհասկանալի» բիաինական **ուրար** բառի և հայերէնում յայտնի **տի-տու** յոգնակիակերտ մասնիկի հետ, սակայն **Արարատ**-ը ներկայացնում է իբրև հայիրանական ստուգաբանությամբ **Արա-դատա** – «Արայատուր», իսկ **Այրարատ**-ը՝ իբրև իրանական ստուգաբանությամբ **Ատրա-դատա** (**ատեր** – «սրբազան կրակ» և «տուր»)»²⁸: Բայց հէնց այս տարբերակների համադիր վերլուծությունից երևում է, որ իրականում խոչընդոտ չկայ՝ վերը քննարկուած հայերէն «այր»-ով կազմուած **Այր-արատ**-ի երկրորդ մասը ևս ընկալելու իբրև հնդեւրոպական ստուգաբանություն ունեցող և, ըստ այդմ, կապելու կամ «արտ», կամ «տուր» հասկացությունների հետ:

Տեղին նշենք նաև, որ Ի. Դեակոնովի կարծիքով՝ **հայ** (<***հայո-**) էթնանունը կարող է ծագած համարուել **խեթ-հաթէ** ցեղանունից, հմմտ. «Այս եզրոյթը [**Hâte**] նախահայերէն պիտի հնչէր վերականգնումով՝ **Hāt'ios**, իսկ նրա հետագայ զարգացումը պիտի լինէր... **Hāt'ios** > **Hayo-** > **haj-**... մեր ենթադրությամբ՝ ուրարտները [**իմա՛** բիացիները – **Ա. Յ.**] նախահայերին կոչում էին **Hâte**, իսկ վերցնելով նրանց լեզուն՝ այդ եզրոյթը դարձրին իրենց ինքնանուանումը»²⁹: Ուրիշ հետազոտողների պէս մեզ էլ վերապահելի է թուում նաև Վեաչ. Իւանովի կողմից ամփոփուած վարկածը, որի փաստարկները, թուում է, յենուած են Ատրիքի ինչ-ինչ անունների հետ զուտ պատահական նմանութեան վրայ. հմմտ. «[Փոքրասիական խաթախեթական երկլեզու բնագրերում] լայնօրէն ներկայացուած է խեթական **Ta-ši-me-ti** աստուածուհին, որը մ. թ. ա. III և II հազ. թուագրուող՝ Աշշուրից [զտնուած] կապադովկիական (փոքրասիական) հին ասուրերէն աղիսակում կապուում է **Ha'a**-ի հետ՝ մի էթնոնիմ ու անձնանուանական [օնոմաստիկ] մասնիկ, որը համապատասխանում է մի՛ կողմից հայերի և նախահայերի հին անուանն ու ինքնանուանմանը, միև կողմից՝ **Haja** անձնանուանական մասնիկին՝ վկայուած **Azi** և **Armi** տեղանքների, մարզերի կամ քաղաքների անունների **հետ միասին** այն տեղանունների թուում, որոնք արձանագրուած

խանգարելու մտածել, որ այդ երկրանունը Ք. ա. առաջին հազարամեակի սկզբներին կարող էին հէնց **այր**-ով ընկալել նրանք, ովքեր դա թարգմանելու էին խոտիերէնի (ենթադրաբար՝ նաև բիաիներէնի) **տի**-ով:

27 Նոյն տեղում: Հմմտ. **Մովսիսի Խորենացոյ Պատմություն Հայոց**, Աշխատութեամբ **Մ. Արեղեան** և **Ս. Յարութիւնեան**, Տփղիս, 1913, գլ. Ա.ԺԵ, էջ 49:

28 **Յ. Կարազեօզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 11-18:

29 **И. М. Дьяконов**, *К праистории армянского языка*, с. 172-173; նոյնի՝ *Предыстория армянского народа*, с. 236.

են ստորև ցիտուող՝ Էբլայի մ. թ. ա. III հազ. կէսերի սեպագիր բնագրերում... հետագայում նոյն **Haja** եզրոյթն իբրև տեղանուն վկայուած է I հազ. առաջին դարերում, Կարթեմիշից [գտնուած] լուվիերէն գաղափարագիր վիմագրում...»³⁰:

Նշելի է նաև, որ **հայ** (<***հայո-**) ինքնանունով (էնդոէթնոնիմ) համախմբուած նոր էթնոսի համար, ըստ ամենայնի, **ընդունելի են** եղել նաև հարևանների կողմից իրեն տրուած և այս կամ այն ծագում ունեցող (բայց բոլորն էլ ոչ քամահրական-պեյրոստի) այլանուանում-**արտանունները** (էքզոէթնոնիմ): Իրանցիների և յոյների մօտ դա եղել է՝ **արմեններ, Արմինա** են, քարթուելական ցեղերի մօտ՝ **սոմէլներ**³¹, սէմական ժողովուրդների մեծ մասի մօտ՝ **ուրարտացիներ, ուրաշտացիներ, Արարատ** են³²: Ի դէպ, գուցէ, կարելի էր մտածել, թէ հայերին **արմեն** կոչած իրանցիներն ու յոյներն այդպէս են վարուել իրարից անկախ, իբրև հնդեւրոպալիսոս ժողովուրդներ: Սակայն աւելի հաւանական է թուում, որ **արմեն**-ը զուտ «մարական» արտանուն (էքզոէթնոնիմ) է՝ Մարաստանի պետութեանն անցած **Արմէ/Ուրմէ** երկրի (=Բիաինական պետութեան մարզի) հարաւային հարևան արամէացիներից, իսկ յոյներին այն հասել է լոկ վաղ աքեմենեան շրջանի պաշտօնական կապերի ճանապարհով փոխառուելու շնորհիւ: Այդ մասին հմնտ. Ի. Դեակոնովի դիտարկումը. «արամէացիները նրանց [իւրերին] անուանում էին **Armēnāie** (Արմէ մարզի [անունի]ց, որտեղ նախահայերէնալիսոս ցեղերը յարում էին արամէացիներին, այստեղից էլ՝ հին իրան. **Armīna**)»³³: Ի դէպ, նման փոխառումը կարող էր տեղի ունենալ մի-միայն Ք. ա. Զ-Ե դարերում, ուստի՝ այս տարբերակով կարելի է վերջնականապէս մերժել որևէ կապ **հայերի (արմենների)** և փոքրասիական **արիմների** առասպելական ցեղի միջև, որոնց մասին պատմում էր Ք. ա.

30 **В. В. Иванов, Выделение разных хронологических слоев в древнеармянском**, с. 30–31 (հմնտ. **Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, Индоевропейские языки и индоевропейцы**, с. 913; **В. В. Иванов, О взаимодействии индоевропейских и северокавказских диалектов в ареале Армянского нагорья**, с. 137): Նաև՝ շարունակութեան մէջ. «Մեծ հաւանականութեամբ, Էբլայի բնագրերում յիշատակուած **Արմի-**ն (որպէս քաղաք, որը վաղ վիմագրերում՝ առանձին թագաւոր, աւելի ուշ՝ Էբլացի կուսակալ ունէր) նոյնանում է **Armānum**-ի հետ, որը Էբլայի հետ միասին նշուած է **Նարամ-Սուէն Աքքադացու վիմագրերում**... Այնուհետև նոյն բնագրում այլոց մէջ յիշատակուած է **Azi-**ն... Մէկ այլ տնտեսական բնագրում յիշուած է **Հայա-**ն **Խուտիմ-**ից» (էջ 32): Ի դէպ, արամէաբնակ Էբլա քաղաքը գտնուել է Ատրիքի հիւսիսում, Հալէպից ոչ հեռու:

31 **Սոմէլս-**ի հիմքում Գ. Զահուկեանը դիտարկում էր Արևմտ. Եփրատի վերնահովտի հայասական **Սամուխա** քաղաքի անուանումը (Երզնկայի մերձակայքում), այլ ոչ թէ նախկին հետագօտողների պէս՝ ծովափնային **Սուլմու** գաւառանունը (**Գ. Բ. Զահուկեան, Հայոց լեզուի պատմություն. նախագրային ժամանակաշրջան**, Եր., 1987, էջ 288): Սամուխայի տեղադրութեան համար հմնտ. **В. Н. Хачатрян, Восточные провинции Хеттской империи (Вопросы топонимики)**, Ер., 1971, с. 62–66; **Ա. Քոսեան, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (Հար խեթական սեպագիր աղբիւրների)**, Եր., 2004, էջ 85–89; **Ս. Պետրոսեան, Սամուխայի Մայր դիցուհու պաշտամունքի ակունքները**, – ՊԲՀ, 2004, N 1, էջ 160–174: Աւելի արևմտեան տեղորոշման մասին տես **S. Alp, Die Lage von Samuha**, – “Anatolia”, I, 1956, с. 77–80.

32 Մ. Կատուալեանը նկատել է (**М. А. Катвалян, Процесс образования первого единого государства на Армянском нагорье**, էջ 28–29), որ մէկ այլ սէմական տարբերակով հայերի արտանունը եղել է նաև **Քարդու** (>**Կորդուք, Գորդիւէնէ**), որի հինկտակարանային և վաղ քրիստոնէական յիշատակութիւնների մասին տես **Հ. Վ. Ինգլիզեան, Հայաստան Մարր Գրքի մէջ. տարբերակային-աշխարհագրական ուսումնասիրություն**, Վիեննա, 1947, էջ 15–21:

33 **И. М. Дьяконов, К праистории армянского языка**, с. 173; նոյնի՝ *Предыстория армянского народа*, с. 234–235:

Թ-Ը դդ. կամ աւելի վաղ շրջանում ստեղծագործած Հոմերոսը (ըստ «Իլիականի»)՝ սպանելով առասպելական Տիւփոն հսկային՝ Ջևար նրան թաղել էր Արգէոս լեռան մօտ գտնուող նրա հայրենիքում՝ «**արիմների** երկրում», այսինքն՝ Գամիրքի հարաւում)³⁴:

Ինչ վերաբերում է **Արմէ** երկրանունի ծագմանը, որը Ք. ա. ԺԲ դարից ընդգրկում էր աշխարհացոյցեան Տարօն գաւառի և Աղձնիք նահանգի հիւսիսային Սանասունք և շրջակայ գաւառների տարածքը, ապա այն, ըստ առաւել հաւանական վարկածի՝ յանգում է Ք. ա. ԺԲ դ. Բարձր Հայքից (այսինքն՝ նախորդ դարի խեթական աղբիւրների յիշատակած Հայաշա-Հայասա երկրի տարածքից) դէպի Տարոսի լեռներ տեղաշարժուած (ըստ Թիգլաթպալասար Ա-ի /1115-1077/ տարեգրութեան՝ կասկերի կամ արեշ-լացիների հետ համատեղ, ովքեր նախորդ դարում հանդէս էին գալիս Խեթական տէրութեան դէմ հայասացիների հետ միասին) **ուրումէացիներ** կամ **ուրուացիներ** ցեղամիութեան անուանը³⁵ (^{KURU}-ru-ma-a-ia^{MES}, ^{KURU}-ru-ia^{MES}), որն էլ, իր հերթին, ըստ Հրայր Աւետիսեանի վերջին ճշգրտումների՝ ծագում էր Հայասա-Ազգլիի **Ուրա** (^{uru}U-ra, ^{uru}U-ra-a) նշանակալից քաղաքի կամ քաղաք-պետութեան առայժմ չստուգաբանուած անունից (ինչպէս որ **Բարելոն** քաղաքի անունից կոչուել են **բարելացիները**, **Աշշուրի** անունից՝ **ասորեստանցիները** ևն)³⁶: Տեղին նկատենք նաև, որ անտիկ բոլոր աղբիւրներում «արմեններ» (**Ἀρμένιοι**) անուան տակ նշուել են պարգապէս **հայերը**, այսինքն՝ կազմաւորուած **հայ** (=արմեն, ուրարտացի, սոմէլս ևն) էթնոսը, և չնայած դրան, ԺԹ դ. գիտութեան մէջ ձևաւորուել է (փաստօրէն՝ յօրինուել) «արմեն» **ցեղի** մասին դրոյթը, որն այսօր էլ դեռ լրիւ յաղթահարուած չէ:

Այստեղ համառօտ նշենք, որ մեր խնդրի համար շատ կարևոր բիւ-իներէն – հայերէն լեզուական առնչութիւնների մասին գիտենք դեռևս Հր. Աճառեանի ընդարձակ քննութիւնը և օրինակները³⁷: Աւելի մանրամասն դրանք վերլուծուած ու ամփոփուած են ակադ. Գ. Ջահուկեանի աշխատանքներում³⁸: Դրանց լոյսի ներքոյ կրկնենք, որ վերը նշուած միջցեղային կոյնէի առումով³⁹ անհրաժեշտ է ուշադիր դիտարկելի համարել այն

34 Տե՛ս **Hom. II. II, 771-777**: Ի դէպ, նման համադրումը շատ հետազօտողներ մերժել են ուրիշ կարգի հիմքերով:

35 Հմմտ. **Ս. Տ. Երեմեան**, *Հայերի ցեղային միութիւնը Արմէ-Շուպրիա երկրում*, – ՊԲԸ, 1958, N 3, էջ 66-68:

36 Մանրամասն տե՛ս **Հ. Մ. Աւետիսեան**, *Հայկական լեռնաշխարհի և հիւսիսային Միջագետքի պեղական կազմաւորումների քաղաքական պայմանութիւնը մ. թ. ա. XVII-IX դդ.*, Եր., 2002, էջ 108-113; Ուրա քաղաքի մասին տե՛ս **В. Н. Хачатрян**, *Восточные провинции Хеттской империи*, с. 129-132; **Ա. Քոսեան**, *Հայկական լեռնաշխարհի տեղանունները*, էջ 100-101:

37 Տե՛ս **Հր. Աճառեան**, *Հայոց լեզուի պայմանութիւն*, I մաս, էջ 150-190 (Գլուխ Զ. Խաղերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ): Հմմտ. նաև **Մ. Մկրեան**, *Հայ ժողովրդի կազմաւորման և հայ գրականութեան սկզբնաւորման հարցը*, – ԲԵԸ, 1967, N 1, էջ 45-49:

38 Տե՛ս **Г. Б. Джаукян**, *Урартский и индоевропейские языки*, Ер., 1963; նոյնի՝ *Взаимоотношения индоевропейских, хурритско-урартских и кавказских языков*, Ер., 1967; նոյնի՝ *Հայկական շերտը ուրարտական դիզարանում*, – ՊԲԸ, 1986, N 1, էջ 43-58; նոյնի՝ *Հայոց լեզուի պայմանութիւն. նախագրային ժամանակաշրջան*, էջ 427-445; **Բ. Ն. Առաքելեան**, **Գ. Բ. Ջահուկեան**, **Գ. Խ. Սարգսեան**, *Ուրարտու – Հայաստան*, էջ 135-168:

39 Էթնոհամախմբման գործընթացում միջցեղային կոյնէի ձևաւորման կարևորութեան մասին տե՛ս **Э. Г. Туманян**, *Язык как система этнолингвистических систем. Синхронно-диахронное исследование*, Москва, 1985, с. 40 сл.

հարցադրումը, թե դրա հիմքում առաել հաւանական է ենթադրել Բիաինելէի նախ և առաջ կենտրոնական շրջանում, այսինքն՝ Տուշպա-Տուրուշպա-Վանի շրջակայքում տարածուած նախահայերէն բարբառը կամ խօսուածքը⁴⁰: Հէնց վերջինս, թում է, պիտի նախ իւրացուէր՝ իր ուրոյն բաղաձայնական համակարգով բնորոշուող բիաիներէնի կրողների կողմից և ապա այդ վերափոխուած վիճակում միայն անցնէր երկրի մնացեալ էթնիկ խմբերին (մեծ կամ փոքր ինտենսիւթեամբ), այդ թում՝ նախահայերէն այլ բարբառների կրողներին, ընդ որում իւրաքանչիւրի մօտ ստանալով ուրոյն բարբառային-խօսուածքային առանձնայատկութիւններ:

2. Հայոց էթնոհամախմբման աւարտի ժամանակը և հանգամանքները

Բիաինելէ-Ուրարտու պետութեան մէջ և նրա հասարակութեան զարգացման ու ամրապնդման արդիւնքում բուն **հայ** էթնոսի կազմաւորման աւարտն առաել հաւանական է թուագրել մօտաւորապէս Ք. ա. է դ. առաջին կէտով: Դրանից առաջ՝

ա) բիաիներէն բնագրերում արդէն դադարել էր երկրի բնակչութեան էթնիկ տարբեր բաղկացուցիչներին, իբրև թշնամական կամ անհարազատ տարրերի, առանձին էթնանուններով կոչելը. դա վկայում է, որ ընդհանուր անուան հանդէպ այդ շրջանում այլևս դիմադրութիւն չկար և նախկին խմբերը բաւականին ընդհանրութիւններ էին ձեռք բերել՝ նոյն անունը կրելու համար;

բ) բիաիներէն բնագրերում արդէն տուեալներ են նշմարում սեպագրերի թարգմանիչների մասին, ինչպէս երևում է, օր.՝ Ռուսա Բ-ի (685-645) մի վիմագրում Յովի. Կարագեօզեանի կողմից ճշգրտուած ընթերցումից⁴¹. դա վկայում է բանաւոր բիաիներէնի գործառութեան մարման ու հայերէնով նրա (այդպէս, ենթադրաբար՝ նաև միւս լեզուների) փոխարինման վերաբերեալ;

գ) տարալեզու բնագրերում յայտնուում են բազմաթիւ վկայութիւններ՝ հարկան ժողովուրդների կողմից երկրի բնակչութիւնն արդէն իբրև միասնական ամբողջութիւն ընկալելու մասին (նախ և առաջ՝ ասորեստանցիների կողմից, բայց նաև՝ յոյն վաղ հեղինակների, որոնք, թերևս, յենում էին մարական ու աքեմենեան ականդոյթի վրայ). ընդ որում նրանց այդպիսի ընկալումն այն արտանուն-այլանունումներով էր (Ուրարտու-Արարատ և Արմենիա), որոնց իմաստային ընդգրկումները հետագայ դարերում այլևս չեն փոփոխուում:

Հայ էթնոսի էթնոհամախմբման աւարտի՝ մեր նշած ժամանակը համընկնում է Բիաինական պետութեան յարաբերական թուլացման շրջանի հետ Ք. ա. է դ. վերջերից (714 թ. Ռուսա Ա-ի՝ Սարգոն Բ-ից կրած

40 Այս տարածքում, ենթադրաբար, բիացիների համար, հաւանաբար, իբրև ենթաշերտ (սուբստրատ) ծառայած նախահայախօս բնակչութեան մասին դիտարկումներ տես Յ. Կարագեղեան, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 33-34; А. Е. Петросян, *Армянский эпос и мифология*, с. 196-198.

41 Տես Յ. Կարագեղեան, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 48-50:

պարտություններից յետոյ) մինչև է դ. կէսերը, երբ այն ստիպուած էր տա-
րածաշրջանային գերակայութիւնը զիջել Ասորեստանին՝ փաստօրէն դա-
դարեցնելով նախկին քաղաքական ակտիւութիւնն իր հարաւային սահ-
մաններում: Ըստ Աշուրբանիպալի (669–626) տարեգրութեան՝ Սարգուրէ
Գ-ն նրան Ք. ա. 645 թ. մեծարում էր «իմ տէր թագաւոր» խօսքերով⁴²:
Թերևս, հէնց նշուած պատմական պահի արձագանքներն է արտացոլում
ինչ-որ ճանապարհով Մովսէս Խորենացուն հասած այն առասպելականա-
ցուած տեղեկատւութիւնը, ըստ որի Արայ Գեղեցիկի սպանուելուց յետոյ
Հայաստանը որոշ ժամանակով յայտնուեց Շամիրամի ու նրա յաջորդների
գերիշխանութեան տակ: Իսկ մեր խնդրի առիթով կարելի է նշել, որ Բի-
աինելէ-Ուրարտուի այդպիսի «ձնշուած» կարգավիճակը (իհարկէ, չչափա-
զանցելով դրա արդիւնքը), հնարաւոր է՝ լրացուցիչ ձևով խթան է հանդի-
սացել նրա հասարակութեան համախմբման և մասնաւորապէս՝ միջէթնիկ
ինտեգրացիոն գործընթացի համար:

Ժամանակացուցիչ կարևոր փաստ է նաև Ք. ա. Ը դ. վերջերին Ռուսա
Ա արքայի՝ Թովուզաւայում կանգնեցրած կոթողի երկլեզու արձանագրու-
թեան բնագրերում **Բիաինելէ** (բիաիներէնում) և **Ուրարտու** (աքքա-
դերէնում) անունների զուգադրումը⁴³: Դրա փոխարէն Ք. ա. Թ դարում
բիաիներէն **Բիաինելէ**-ի հետ զուգադրում էր աքքադերէնի **Նաիրի** երկր-
անունը⁴⁴, իսկ վերջինիս **սահմանակից** (ըստ աքքադերէն բնագրերի)
Ուրարտու-ի համարժէքը, փաստօրէն, բիաիներէն բնագրերի **Շուռելէն**
էր⁴⁵ Վանայ լճից հիւսիս, այսինքն՝ առաւել մեծ հաւանականութեամբ՝ հե-
տագայի աշխարհացոյցեան **Արարատ/Արարատ** նահանգի հարաւային
շերտում: Վերջին դրոյթն, իհարկէ, բխում է **Արծաշքու** ձևով վկայուած ար-

42 Տարեգրութեան բնագիրն է (Ն. Ադոնցի թարգմանութեամբ). «Ուրարտուի թագաւոր
Սարգուրին, որի թագաւոր-հայրերն ուղարկել են իմ հայրերին «եղբայրութիւն» [այսինքն՝
եղբայրական ողջոյն], այդ ժամանակ... ուղարկեց ինձ յանձնելու, ինչպէս որդին իր հօրը,
տիրակալին պատշաճ ողջոյն, և այդ առթիւ նա ինձ յղեց հետևեալ պատգամը՝ «Ողջոյն իմ
տէր թագաւորին», և յարգանքով ու խոնարհաբար իմ դիմաց բերել տուեց իր ծանրաքաշ
նուէրը» (Ն. Ադոնց, *Հայաստանի պատմութիւն. Արմեյնները X-VI դդ. մ. թ. ա.*, Ֆրանսերէնից
[Paris, 1946] թարգմանեց Վ. Պ. Սեդրոսեանը, Եր., 1972, էջ 142): Հմմտ. **И. М. Дьяконов**,
Последние годы Урартского государства по ассирио-вавилонским источникам, – ВДИ, 1951, N
2, с. 30–31.

43 Հմմտ., օր.՝ **Н. В. Арутюнян**, *Корпус урартских клинообразных надписей*, Ер., 2001, с. 290-291.
«^{KUR}Bi-a-i-ni-li» – «^{KUR}URI (= ^{ma}Urartu)»:

44 Տուշպայի հիմնադրման մասին Սարգուրէ Ա-ի (840–825) աքքադերէն սեպագրում ունենք.
«Սարգուրէի արձանագրութիւնը, որդու Լուրիպրիի, մեծ արքայի, հզօր արքայի, տիեզերքի
արքայի, **Նաիրիի** արքայի, արքայի, որին հաւասարը չկա... Սարգուրէն... արքան [է] արքա-
ների, որը բոլոր արքաներից հարկ վերցրեց...» (*Հայ ժողովրդի պատմութեան քրեպոմարիա*,
հտ. 1, Կազմ. Պ. Հ. Յովհաննիսեան, Ա. Գ. Աբրահամեան, Եր., 1981, էջ 39–40 /հատուածի
թարգմանիչ՝ Յ. Կարազեօզեան/; **Н. В. Арутюнян**, *Корпус урартских клинообразных надписей*,
с. 9, նոյն բնագրով՝ նաև յաջորդ հինգում՝ с. 10–11): Նրա որդի Իշպուինէն Կելիշինեան կոթողի
երկլեզու արձանագրութեան աքքադերէն բնագրում իրեն կոչում է «արքայ **Նաիրի** երկրի
[^{KUR}Na-i-ri]», իսկ բիաիներէնում՝ «արքայ **Բիաինելէ** երկրի [^{KUR}Bi-a-i-na-u-e]» (**Н. В. Арутюнян**,
Корпус урартских клинообразных надписей, с. 25–27, հմմտ. с. 30, ծնթ. 68, 76):

45 Տե՛ս **Յ. Կարազեօզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում*, էջ 25–32
(^{KUR}Suraue երկրի մասին աղբյուրների և գրականութեան յղումներով): Հմմտ. **Ն. Ադոնց**,
Հայաստանի պատմութիւն, էջ 215–216; **I. M. Diakonoff**, *First Evidence of the Proto-Armenian
Language in Eastern Anatolia*, – «Annual of Armenian Linguistics», Vol. 13, 1992, p. 53: Շուռելէի
մասին մի այլ մօտեցում տես **G. Wilhelm**, *Sura/i in Kargamiš und das Urartäische Gentilz Surele*,
– «Studi Micenei ed Egeo-Anatolici», F. XXXI, Roma, 1993, p. 135–141; **А. Е. Петросян**, *Армянский
эпос и мифология*, с. 178.

քայական քաղաքի տեղորոշումից ոչ թե Արձեշուն⁴⁶ կամ Արծկեուն⁴⁷ (երկուսն էլ՝ Տուրուբերանում), այլ վաղմիջնադարեան յայտնի Արծափ բերդաքաղաքի (է դարում՝ Բագրատունեաց իշխանատոհմի կենտրոնական կալուածք, Կոգովիտ գաւառում) կամ Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ում յիշատակուած (գլ. Բ.լբ) բագրևանդեան Արծակ գիւղի շրջաններում⁴⁸: Ք. ա. 856 թ. Արծաշքուն գրաւած Սալմանասար Գ-ն (859-824) հաղորդում է, որ քաղաքն աներելուց յետոյ ինքն անցել է Էրիտիա լեռը (համադրում է Ծաղկանց – Ալադաղ լեռնաշղթայի հետ), Արամալի (հմմտ. աշխարհացոյցեան Առբերանի գաւառ, տարածուած՝ Բ-Մ-Բ և Բ-Լ-Բ հնչիւնափոխութեամբ) և Զանգիունա «երկրները», ապա միայն «լուացել գէնքերը» Նաիրիի ծովում (Վան)⁴⁹:

Տեղին մանրամասներ, որ այս «վաղ» **Ուրարտու**-ի համարժեքն էլ կարող է համարուել **Շուռեղէ**-ն (ըստ այդ տեղանունան՝ Յովհ. Կարագեօզեանի, այլ ո՛չ թե՛ «տիեզերք» կամ նմանատիպ այլ ընկալման⁵⁰), եթէ վերջնականապէս, հետևելով Մ. Կատուալեանին, ընդունենք **Ուրարտու**-ի հետ Ք. ա. ԺԳ-ԺԱ դդ. (Սալմանասար Ա-ի և Թիգլաթպալասար Ա-ի բնագրերում) իրականում Եփրատից արևմուտք, արևելեան Կիլիկիայի լեռներում յիշուած **Ուրուատրի / Ուրատրի** երկրանունան աւանդական նոյնացման վերապահելի լինելը: Ըստ Ա. Գեօտցէի և այլ խեթագէտների՝ **Ուրուատրի**-ի ուր երկրանասերից՝ **Խիմնէ, Բարգուն, Սալուա, Խալիլա, Ուատկուն, Լուխա, Նիլիպախրի** և **Զինգուն**, առաջին հինգը (ընդգծուած), ինչպէս նաև նրա **Արունա** քաղաքը, **Տալա, Խարուսա** լեռները և հարևան **Կումանու** (անտիկ աղբիւրների՝ **Կումանա, Խամանեյա**) և **Մուսրու** (Եգիպտոս) երկրները խեթական և այլ բնագրերում յստակօրէն տեղորոշում են Կիլիկիայի արևելքում ու շրջակայ տարածքներում, իսկ դրանց՝ Էմիլ Ֆոռերից եկող համադրումները Հայկական լեռնաշխարհի հարաւային ու հարաւ-արևելեան շրջանների տեղանունների հետ (ստուգուած նաև մեր կողմից) կան վրիպեալ են, կան խիստ թէական⁵¹:

46 Տե՛ս՝ **Հ. Վ. Ինգլիզեան**, *Հայասրանի Սորր Գրքի մէջ*, էջ 137-143; **Օ. Օ. Կարազեյան**, *Локализация урартского царского города Арцаишу*, – ВОН, 1976, с. 67-98; նոյնի՝ *Հայկական լեռնաշխարհի սեպագիր աղբիւրներում*, էջ 24-25 և յետոյ; **Ա. Ե. Սեթրոսյան**, *Армянский эпос и мифология*, с. 79:

47 Տե՛ս **Գ. Ղափանցեան**, *Ուրարտուի պատմութիւն*, Եր., 1940, էջ 134; **Н. В. Арутюнян**, *Топонимика Урарту*, Ер., 1985, с. 48-50; **Ա. Ե. Սեթրոսյան**, *Армянский эпос и мифология*, с. 79:

48 Տե՛ս **Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մանիկոնեան**, Աշխատութեամբ **Գ. Տէր-Մկրտչեան** և **Ստ. Մալխասեան**, Տիգրիս, 1904, գլ. Բ.լբ, էջ 61:

49 Տե՛ս **И. М. Дьяконов**, *Ассиро-вавилонские источники по истории Урарту*, – ВДИ, 1951, N 2 (այսուհետև՝ АВИИУ), § 27, с. 296: Ակադ. Բ. Պիոտրովսկին հաւանական էր համարում Արծաշքուի տեղորոշումը «Արածանիի վերին հոսանքում, ժամանակակից Դիադինի շրջանում», այսինքն՝ Բագրևանդից և Բագաւանից արևելք (**Б. Б. Пиотровский**, *Ванское царство (Урарту)*, Москва, 1959, с. 56): Ստուաորապէս նոյնը տես դեռևս ակադ. Յակոբ Մանանդեանի մօտ. «...Ալադաղի լեռնազանգուածի արևմտեան կամ հարաւ արևմտեան բազուկների վրայ» (**Я. А. Манандян**, *О некоторых спорных проблемах истории и географии древней Армении*, Ер., 1956, с. 29-32):

50 Տե՛ս **Յ. Կարագեօզեան**, *Հայկական լեռնաշխարհի սեպագիր աղբիւրներում*, էջ 25-27: **Շուռեղէ** տեղանունի իբրև «տիեզերք» ընկալման պատճառով այն չի ընդգրկուած Նիկ. Յարութիւնեանի կազմած (այդպէս նաև՝ Գէորգի Մելիքիշիլու) տեղանունացանկերում (հմմտ. **Н. В. Арутюнян**, *Топонимика Урарту*, с. 250, 302; նոյնի՝ *Корпус урартских клинообразных надписей*, с. 524):

51 Տե՛ս **А. Göetze**, *Kizzuwatna and the Problem of Hittite Geography*, New Haven, 1940, p. 9, 30-40, 49-52; **J. Garstang, O. R. Gurney**, *The Geography of the Hittite Empire*, London, 1959, с. 24-25; **В. Н. Хачатрян**, *Восточные провинции Хеттской империи*, с. 32-34, 91-95; **В. П. Яйленко**,

Անփոփելով տուեալ մօտեցումը՝ կարող ենք արձանագրել, որ «վաղ» Ուրարտուն՝ Արամու արքայի բուն պետությունը, ունէր շատ կոնկրետ տարածք, որը զգալիորէն դէպի հիւսիս և հիւսիս-արևելք էր ընկնում Մալմանասար Գ-ի (859-824) արձանագրութիւններում թուարկած «Նաիրեան» երկրներից⁵², այն է՝ Արևմտեան Տիգրիսի և Արածանիի հովիտներում բաւականին անվիճելի տեղորոշումներ ունեցող՝ **Ալզի** (հետագայ՝ **Աղծն**), **Էնզիտէ** (հետագայ՝ **Անձիտ**), **Սուլամու**, **Տումմէ**, **Դայաննու** (տեղորոշումը՝ հետագայ Հարքում, ըստ Յովի. Կարագեօզեանի կողմից մանրամասն փաստարկուած խիստ կարևոր մօտեցման⁵³), իսկ Արևելեան Տիգրիսի և Մեծ Զարի հովիտներում՝ **Գիլգանու**⁵⁴, **Խուրուշքիա**⁵⁵, **Մուծածիր**⁵⁶: Մալմա-

Архаическая Греция и Ближний Восток, Москва, 1990, с. 165-168; **Մ. Կատուպեան**, *Ուրարտու «աշխարհի» բնօրրանի տեղորոշման շուրջ*, էջ 90-94: Հմմտ. **E. Forrer**, *Die Provinzeinteilung des assyrischen Reiches*, Leipzig, 1921, S. 35; *Reallexicon der Assyriologie*, B. I, Berlin, 1928, S. 150, 265, 282: Ի դէպ, ինչպէս նշում է Գ. Զահուկեանը (յղելով՝ **W. Eilers**, *Geographische Namengebung in und um Iran*, S. 28), «Գ. Նոյմանը այն [Ուրուարտիին] բացատրում է որպէս խեթական Սր-*matr* «մեծաջուր» (**Բ. Ն. Առաքելեան**, **Գ. Բ. Զահուկեան**, **Գ. Խ. Սարգսեան**, *Ուրարտու – Հայաստան*, էջ 163):

52 Տե՛ս *АВИИУ*, – ВДИ, 1951, N 2, § 27-33, с. 295-300: Նշենք, որ ասորեստանցիները **Նաիրի** երկրանունը մօտաւորապէս նոյն տարածքի համար օգտագործում էին սկսած Բ. ա. ժԳ դ. երկրորդ կէսից (1244-1208 թթ. իշխած Թուրուլթի-Նիւտրթա արքայի արձանագրութիւններում), այսինքն՝ Թ դարում **Ուրարտու** երկրանունն ի յայտ գալուց շատ առաջ (հմմտ. **Г. А. Меликишвили**, *Наири-Урарту*, Тбилиси, 1954, с. 13, 19; **Յ. Կարագեօզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 11):

53 **Յ. Յ. Կարագեօզեան**, *Սեպագիր աղբիւրների Դայաննու երկիրը*, էջ 65-94; նոյնի՝ *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 21-24: Դայաննուն **Գիաուելթի-Տեյաւելթ-Տայթ**-ի հետ նոյնացնելու փոխարէն՝ Արածանիի հովտում, աշխարհացոյցեան Հարքի շրջանում տեղորոշելու տարբերակը տե՛ս դեռևս Յ. Մանանդեանի մօտ (*О некоторых спорных проблемах*, с. 25-31) և Ա. Տ. Երեմեանի «Ուրարտու պետութիւնը. 860-590 թթ. մ. թ. ա.» քարտէզում (Եր., 1980): Ի դէպ, թուում է, թէ առայժմ զուտ իբրև վարկած՝ կարելի է քննարկել **Դայաննու** երկրանունը և նրանից ծագած դիտուող (Յ. Կարագեօզեան) **Դաինալա-թինէ** գետանունը Հարքի հիւսիսային հարևան **Դալառ** գաւառի անունն հետ համադրելու հնարատրութիւնը (հմմտ. *Աշխարհացոյց Մովսէսի Խորենացույ. Յանդուածովք նախնեաց*, [Հրատ. **Ա. Սուրբեան**], Վենետիկ – Ս.Ղազար, 1881, էջ 32. «և նորա իմա՛ Դաստնաւոր գաւառի – **Ա. Յ.]** յելից՝ Տուարածատափ, նորա յելից՝ **Դալառ**. և ի հարաւոյ նոցա **Հարթ** և Վալրալժնունիք, մինչև ց(Արածանի)»):

54 Առաւել հաւանական տեղորոշումը՝ Աղծնիք աշխարհի արևելեան գաւառներից մէկի՝ Գզելթի տեղում և շրջակայքում (Բաղէշ գետի հովիտ), ըստ, օր.՝ Ա. Երեմեանի (*Ուրարտու պետութիւնը. 860-590 թթ. մ. թ. ա.* /քարտէզ/) և Մ. Կատուպեանի (*Ուրարտու «աշխարհի» բնօրրանի տեղորոշման շուրջ*, էջ 96) համադրումների (այլ տեղորոշումների մասին տե՛ս **Ն. Աղոնց**, *Հայաստանի պատմութիւն*, էջ 75, 86, 361; **Ա. Սարգսեան**, *Արդինի-Մոասաիրի տեղորոշման շուրջ*, – ՄՄԱԵԺ, XIX, Եր., 2000, էջ 143, 151):

55 Առաւել շրջանառու տեղորոշումը՝ Արևելեան Տիգրիս – Ջերմագետի միջին և վերին հովիտներում՝ աշխարհացոյցեան Մոկաց աշխարհից մինչև Վասպուրականի Անձնացիք գաւառ (տե՛ս, օր.՝ Ա. Երեմեանի «Ուրարտու պետութիւնը» քարտէզում; **И. М. Дьяконов**, *Предыстория армянского народа*, ներդիր քարտէզ, էջ 180-181-ի միջև): Ըստ այդմ, գուցէ, իբրև վարկած, կարելի է քննարկելի համարել այս **Խուրուշքիա** տեղանունն համադրման հնարատրութիւնը **Մոկս**-ի հիմքում՝ ըստ ամենայնի, ընկած **մուշկ** ցեղանունն հետ (**Բ-Մ-Բ** տարածուած հնչիւնափոխութեամբ):

56 Ինչպէս նկատել ենք «Աշխարհացոյց»-ի քննական քննադրի կազմման առիթով՝ **Մուծածիր** երկրանունը համադրելի է թուում հետագայի **Միթոլթոլդ-անք** գաւառանունն հետ՝ Կորձայք նահանգի արևելքում (**Բ – Լ-Ղ**, հնչիւնափոխութեամբ. անունամանի կրկնուող վանկի համար հմմտ. **Բաղէշ – Բաղաղէշ**, սեպագրում՝ **Ուայայիս**, իսկ **Ծ – Թ**՝ հերթագայութեան համար՝ **Կեթիկ գաւառ – Կեծան ուշմիջնադարեան գաւառակ**): Ճիշտ է, այդ երկրի **Ծապարիա** քաղաքանունը (*АВИИУ*, 1951, N 2, § 28.174, с. 297) անելի հաւանական է թուում համադրել «Աշխարհացոյց»-ի «ընդարձակ խմբագրութեան» մէջ **Սարապ-նիս** ձևով

նասարի մի քանի վիճագրեր յիշատակում են նրա թագաւորութեան առաջին տարում (859 թ.) **Խուրուշբիա-Նաիրի** երկրի **Կակիա** արքային յաղթելուց յետոյ «ուրարտացի» **Արամու** արքայի տիրոջների հարաւային սահմանագլխին գտնուող **Սուգունիա** (^{UR}Su-gu-ni-a) բերդաքաղաքը գրաւելու մասին⁵⁷, որի համադրութիւնը նոր ժամանակներում Ջերմագետի, Մեծ Զարի և Խոշար-Հայոց ձորի ջրբաժան լեռնազանգուածի լանջերին յայտնի գոյգ գիւղերի **Սիկունիս** և **Սուկան (Սուկանց)** անունների հետ առաւել հաւանականն է⁵⁸: Ժամանակին այս «վաղ» Ուրարտուի՝ նման կոնկրետ տեղորոշումը լիովին ընկալում էր Մաքս. Շտրեկի և այլ մասնագէտների կողմից հմմտ. «շատ հաւանական է, որ Արարատ = Ուրարտու անունը նախնաբար Վանայ լճին արևելակողմը՝ Հայաստանի մէկ մասին անունն էր, մերձաւորապէս այն աշխարհամասին, որ միջին Երասխը կը բռնէ և այսօր ալ Արարատ կը կոչուի. ըստ այսմ Վանայ լճին եզերքներն Ուրարտացւոց բնակավայր եղած են, վերջիններուն հիւսիս-արևելքէն յառաջանալովը»⁵⁹ (յաւելենք նաև, որ բիաինագիտութեան մէջ ընդունուած կարծիքի համաձայն՝ Արծաշքուին տիրող Արամուին յաջորդած Լուծիպ-րին՝ Վան-Տուշպա մայրաքաղաքում տիրակալած Սարդուրէ Ա արքայի հայրը, ամենայն հաւանականութեամբ, պատկանում էր այլ արքայատոհմի⁶⁰): Ճիշտ է, հետագայում գերակշռեց **Ուրարտու-Արարատ – Ուրուատրի – Նաիրի** երկրանուններն անխտիր և առանց ժամանակագրական տարբերակման միմեանց հոմանիշ համարելն ու ըստ այդմ իբրև ոչ կոնկրետ, այլ զուտ «նկարագրական աշխարհագրական հասկացութիւններ» գոնէ նախնաբար Հայկական լեռնաշխարհի ամբողջ հարաւային մասին վերագրելը, սակայն դա ներկայումս պէտք է լրջօրէն վերապա-

նշուած կործայքեան գաւառանուան հետ (Ծ-Մ սովորական հնչիւնափոխութեամբ. ինչպէս նաև **ՊԱՐ – ԲԱՊ** դրափոխութեամբ), որը պահպանուել է ներկայիս **Սարայնիս** գիւղանուան մէջ՝ Մեծ Զարի ձախ ափին, Ջուլամերկից հարաւ և յուշում է, որ Մուծածիր երկիրն ընդգրկել է Կործայքի ողջ արևելեան կէտը: Նշենք, որ «Աշխարհացոյց»-ի համառօտ խմբագրութեան մի քանի ձեռագրերում **Սարայնիք** գաւառանունը գրչական վրիպակներով վերածուել է **Կարթունիք**-ի (տարբերակներով), և այդ ձևն ընդունած Ս. Երեմեանը, Բ. Յարութիւնեանն ու այլք գաւառը շտապողաբար տեղորոշել են աւելի հարաւ-արևելք՝ նահանգի հարաւ-արևելեան անկիւնում, Շամդիան վտակի վերնահովտում (որտեղ պէտք է տեղորոշել Սոթոյթ) դանք գաւառը) գտնուող ներկայիս Կատինայ գիւղի շրջակայքում:
57 Տե՛ս *АВНИУ*, 1951, N 2, § 27, 1.23; 29, с. 295, 298.

58 Տե՛ս **Ն. Ադոնց**, *Հայասրանի պարմութիւն*, էջ 79-80; **Я. А. Манандян**, *О некоторых спорных проблемах*, с. 10; **Я. А. Манандян**, *О некоторых спорных проблемах*, с. 10; **Б. Б. Пиотровский**, *Ванское царство*, с. 55; **Н. В. Арутюнян**, *Топонимика Урарту*, с. 171-172: Սուգունիան գրաւելով՝ թշնամին շարժուեց դէպի «Նաիրի [երկր]ի ծով», այսինքն՝ Վանայ լիճ (հմմտ. *АВНИУ*, 1951, N 2, § 27, ծնթ. 6, § 32, ծնթ. 1, с. 296, 300; **Մ. Գաւորչեան**, «Վերկի ծովի» *ընդարկութիւնը*, – ԼՀԳ, 1977, N 2, էջ 94-98), որի ափին յաղթակոթող կանգնեցնելուց յետոյ վերադարձի ճանապարհին անցաւ **Գիլզանու** երկրով (իմա՝ **Գզեղիս**):

59 Տե՛ս **M. Streck**, *Gebiet der heutigen Landschaften Armenien, Kurdistan und Westpersien nach den babylonisch-assyrischen Keilinschriften*, – “Zeitschrift für Assyrologie und verwandte Gebiete”, XIV, 1899, S. 119; նոյնի՝ *Հայասրան, Բրիտանիան և արևմտեան Պարսկասրան, բարեկական-ասորեստանայ սեպագրերու համաձայն*, թարգմ. **Հ. Բ. Պիլէգիկճեան**, Վիեննա, 1904, էջ 78; նաև՝ **E. Meyer**, *Geschichte des Altertums*, Stuttgart und Berlin, 1926, B. I, S. 694. հմմտ. **Հ. Վ. Ինգլիզեան**, *Հայասրան Սուրբ Գրքի մէջ*, էջ 138-139:

60 Հմմտ. **Г. А. Меликишвили**, *Наура-Урарту*, с. 200-202; **Н. В. Арутюнян**, *Биаһили (Урарту)*, Ер., 1970, с. 120; **M. Salvini**, *Geschichte und Kultur der Urartäer*, Darmstadt, 1995, S. 35; **Յ. Կարազեղեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 27-28; **А. Е. Петросян**, *Армянский эпос и мифология*, с. 195.

հելի համարուի և վերստին ստուգման ենթարկուի:

Ի դէպ, խօսելով «վաղ» Ուրարտուի⁶¹ կամ, ինչպէս Մ. Կատուալեանն էր անուանում՝ «Ուրարտուի բնօրրանի» մասին, պէտք է նշել, որ նրա մէջ Արամուի թագաւորութիւնից առաջ, հաւանաբար, չի մտել կենտրոնական Վասպուրականի շրջանը (Տուշպա – Վանի շրջակայքը), քանի որ այն ևս գտնէ՝ Ք. ա. ԺԲ դ. վերջերին կազմում էր Նաիրիի տարածքը (այսպիսով՝ նոյնպէս կոնկրետացող): Թիգլաթպալասար Ա-ի տարեգրութեան մէջ 1112 թ. համար (IV տարուայ արշաւանք. մասամբ՝ այդպէս նաև Յոնջալուի վիմագրում) ասում է Նաիրիի ծայրից ծայր անցնելու մասին («Նաիրիի ընդարձակ երկրները գրաւեցի **լայնութեամբ ու երկարութեամբ**»), ինչպէս նաև շեշտում է նրա «բոլոր» տիրակալներին (մի տեղ նշուած՝ 60, մի այլ տեղ՝ 43) հնազանդեցնելը. «Իմ ձեռքն ընկան Նաիրի երկրի **բոլոր** թագաւորները, ես նրանց ներեցի և կեանք շնորհեցի»⁶²: Տարեգրութեան մէջ յանուանէ թուարկում են հնազանդեցուած Նաիրիի 23 երկրներ (այդպէս նաև՝ 16 լեռնանուններ), որոնցից վերջինը **Դայանու**-ն էր (Հարք և շրջակայք), ուր տեղի էր ունեցել վճռական ճակատամարտը և ուր կանգնեցուել էր Յոնջալուի արքայական յաղթակոթողը: Դրանց մի մասը դեռևս Ն. Ադոնցը յստակ տեղորոշում էր Արածանիի ստորին հովտից (Տունեբունէի շրջանից՝ Բալուի գետանցից հարաւ) մինչև Ապահունիք և Աղիովիտ. հոռմէական մի ճանապարհացոյցի **Նասարի, Աստերա** և **Սորուա** կայանների անունները, որոնք տեղորոշում են նշուած գաւառներում, ճիշտ համընկնում են նաիրեան 23 երկրներից **ԻԱ. Նագաբիայի, Է. Անդիաբէի** և **ԺԵ. Շարուրիայի** անունների հետ⁶³:

Սակայն հետագայում Յովի. Կարագեոզեանը ցոյց տուեց, որ բացի այդ՝ Թիգլաթպալասարի տարեգրութեան յիշատակած **ԺԸ-Ի** երկրներն, ամենայն հաւանականութեամբ, համապատասխանում են Վասպուրականի կենտրոնական գաւառներին, **Քիրինէն**՝ Մեծնունիքին (Մարմետ և Արժիշակ գետերի վերնահովիտներում)⁶⁴, **Ալբայան**՝ Աղբակին (Մեծ Զաբի վերնահովտում) և **Ուզինան**՝ Բոգունիքին (Մարմետի ստորին հովտում)⁶⁵: Այստեղ յաւելենք նաև, որ անընդունելի պէտք է համարել Մ. Կատուալեանի այն վարկածը, ըստ որի Արամուի տիրոյթների մէջ կարելի է դիտարկել

61 **Ուրարտու** երկրի մասին մեզ հասած առաջին յիշատակութիւնը պատկանում է Ատրեստանի Աշտուրնաճիրապալ Բ արքային (884–859), որի արձանագրութիւններից մէկում՝ 882 թ. արշաւանքին վերաբերող յայտարարութեան մէջ, նշում է, թէ ի թիւս այլ երկրների՝ նա նուաճել էր «Սուրնատ գետի ակունքից **լիմա՛** Տիգրիսի ձախ օժանդակը – **Ա. Յ.**» մինչև Ուրարտու» (տես *ABHY*, 1951, N 2, § 24, c. 290): Համարում է, որ տուեալ արշաւանքի ուղղութիւնը նոյնն է եղել իր յաջորդ՝ Սալմանասար Գ-ի 856 թ. երթուղու հետ՝ Տալրոսի լեռնաշղթայով դէպի Արածանիի վերնահովիտ, սակայն չներխուժելով Ուրարտուի տարածքը (**Մ. Կատուալեան, Ուրարտու «աշխարհի» բնօրրանի փեղորոջման շուրջ**, էջ 95):

62 Տես **Ն. Ադոնց, Հայաստանի պարմութիւն**, էջ 58–62; *ABHY*, 1951, № 2, § 10, IV.43, c. 273–274:

63 Տես **Ն. Ադոնց, Հայաստանի պարմութիւն**, էջ 60–61:

64 Տես **Յ. Կարագեոզեան, Հայկական լեռնաշխարհը սեպագիր արձիւրներում**, էջ 48, 201 (ըստ հեղինակի՝ երկրանունն «հիմքում ընկած է բիաին. **քիրե** բառը, որ նշանակում է «երկար», ուստի նաև՝ «մեծ»):

65 Նոյն տեղում, էջ 94, 201 (ըստ հեղինակի՝ **Ուզինա** > **Բոգունի**–ք անցումը կատարուել է ««ո» հնչիւնից առաջ «վ» աճականով... մի երևոյթ, որը յատուկ է հայերէնին և հնդեւրոպական որոշ լեզուների», ինչպէս նաև՝ «**վ**» անցումով, որը դարձեալ հնդեւրոպական երևոյթ է» (էջ 94):

Արարատեան դաշտն Արմաիր մայրաքաղաքով. դրա հիմքում բացառապէս Արամու «ուրարտացու» և խորենացիական Արամ նահապետի **անվերապահ** նոյնացումն է⁶⁶: Այդ տարբերակով ոչ մի կերպ հնարաւոր չի լինի հասկանալ այն ձիգերի ծանրութիւնը, որոնց շնորհիւ միայն բիաինացի յաջորդող արքաները (Իշպուիւնէն ու Մենուան) կարողացան նուաճել Երասխի հովիտը, մի բան, որ ամենևին չի նկատուում Արամուի իրական տիրոջների համար: Վերջիններն, այսպիսով, տարածուում էին հետագայ Այրարատ նահանգի միայն հարաւային շերտում (Բագրևանդ, Ծաղկոտն, Կոզովիտ գաւառներ) և կենտրոնական Վասպուրականի շրջանում. իսկ Արածանիի միջնահովտի «նաիրեան» երկրներն, ամենայն հաւանականութեամբ, ճանաչուում էին Արամուի գերակայութիւնն իբրև մի ընդհանուր հակաստրետանեան համադաշնութեան առաջնորդի:

3. Բիաինացիների և խորենացիական Հայկեանների տարածման ուղիները

Հայկական լեռնաշխարհում թէ՛ բիաինական սեպագրի լեզուն կրող ցեղախմբի՝ բիացիների նուաճումների աշխարհագրութիւնը, թէ՛ Հայկ նահապետի սերունդների տարածման ուղիները (ինչպէս դրանք, յղելով Մարաբաս Կատինայ Մծուրնացու մատեանին և բանաւոր առասպելին, ներկայացուած են Սովսէս Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում և աւելի համառօտ՝ Սեբիոս պատմիչի «Պատմութիւն ի Հերակլն» երկում⁶⁷), պատմագրութեան մէջ բաւականին մանրամասն քննարկուել են, սակայն հիմնականում՝ առանձին-առանձին: Այնինչ՝ այդ ուղիների համադրումը, կարծեք թէ, թոյլ է տալիս նկատել երկրորդի (Հայկեանների տարածման ուղիների) ծագումնաբանական որոշակի կապն առաջինի՝ բիացիների ծաւալման ուղղութիւնների հետ և դրանում ենթադրել հայ էթնոսի կազմաւորման իրական պատկերի ինչ-որ ձևով արտացոլումը՝ Հայկի և Բելի «առասպելում»⁶⁸:

Ք. ա. Թ դ. վերջից սկսած՝ **Արծաշքու** (Վանայ լճից հիւսիս), **Տուշպա**, **Մուծածիր** և **Դայաննու** (Հարք) կենտրոնների շրջակայ տարածքներում ամրապնդուած ու Ատրեստանի ներխուժումները կասեցնելու խնդիրն էապէս լուծած Բիաինելէ թագաւորութիւնը պարբերական ռազմարշաւներով սկսում է ընդլայնուել դէպի Հայկական Պարից հիւսիս ընկած «էթիւնեան երկրներ»՝ Երասխի վերնահովիտ (Անաշէ, Երիքուախէ – **Որկովի**), Արարատեան դաշտ, Շիրակ (Երիախէ), Գուգարք (Լուշա – **Լօռէ**, Կաթարգա, Զաբախա եւն), Տեյաւելիս – Տայք, Սևանի աւազան ու աւելի հիւսիս (Ալիշ-

66 Տե՛ս Մ. Կատուայեան, *Ուրարտու «աշխարհի» բնօրրանի քրեոքոչման շուրջ*, էջ 101: Հմմտ. ստորև, ծնթ. 125-127: Ի դէպ, հեղինակը սխալուում է նաև՝ **Դայաննու** երկիրը **Դիաուելիս-Տայքի** հետ համադրելով:

67 Վերջին պատմիչի Սեբիոս անուանաձևի և մեզ հասած նրա երկի ժամանակի ու կառուցուածքի մասին առաւել մանրամասն տե՛ս Ա. Յակոբեան, *Սեբիոսի Պարմոսթեան հայրուածարժանման խնդիրը և Ջուարթնցի քաճարի կառուցման մասին գլուխը*, – «Հանդէս ամսօրեայ», ՃԺԹ տարի, Վիեննա-Եր., 2005, էջ 213-270:

68 Վերջին եզրոյթը՝ չակերաններում, քանի որ իրենք՝ Խորենացին ու Սեբիոսը դա առասպել չեն համարում:

տու – **Աղստև**, Իշխանի – **Շտողան**⁶⁹ կամ, ըստ մեզ՝ դրավոլոլոյութեամբ **Դիլիջան** < ***Թիլ-իջ-ան**⁷⁰), բուն Սինիք (Ծուլուկու – **Ծղուկ**, Գուրիա – **Գորայք**), Արցախ (Ուրտելսինէ – **Արցախ**, Տերիա – **Տրի-Տրակետ**⁷¹, Բերգիրա – **Բերձոր** են, վերջինը և բազմաթիւ ուրիշներ՝ ըստ Յովհ. Կարազեօզեանի դիպուկ դիտարկումների), ապա՝ նաև՝ դէպի մերձուրմեան Պարսկահայք ու արեւելի հարաւ, նաև՝ դէպի Աղձնիք (Ալզինէ, Ուրմէ ևն), Ծովք (Ծուպա), Բարձր Հայք (Խալիտու – **Խաղտիք**) ու արեւելի արևմուտք (Խաթե – **Փոքր Հայք**)՝ այդպիսով Ը դ. ընթացքում դառնալով հզօրութեան նոր աստիճանի կանգնած տէրութիւն (ի դէպ, ըստ առկայ աղբիւրների մատուցած խիստ ուշագրաւ պատկերի՝ այդ դարի վերջերից և յաջորդ՝ է դարում բիւսիւնացի արքաների ռազմարշաւների նպատակակէտերը բացառապէս հետագայ Մեծ Հայքից դուրս, նրան սահմանակից երկրներն էին՝ Ատրպատական, Միջագետք, Փոքր Հայք են):

Մտաւորապէս նոյն պատկերով, ըստ Հայկ նահապետի ու նրա սերունդների մասին խորենացիական պատումի (մասամբ նոյնը՝ Սերիոսի մօտ)⁷², առասպելական Բելի դէմ յաղթանակի պահին արևելեան Կորձայքից (Կադմոսի տուն, Կադմէացիք) Վասպուրական նահանգի Հայոց ձորով դէպի Տուրուբերանի Հարք գաւառ տարածուած Հայկեաններն անցնում են Երասխի ձորահովիտ (Պատմահօր շքեղ նկարագրութեամբ⁷³), ապա ծա-

69 Տե՛ս **Յ. Կարազեօզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 228-229:

70 **Իշ-թիլ-ուն-իա** < ***Իջ-թիլ-ան** > ***Թիլ-իջ-ան** (>**Դիլիջան**) անցումներն ընդունելու դէպքում (հայերէնի համար բոլոր դիրքերում սովորական **Թ - Գ** հնչիւնափոխութեամբ և բիւսիւներէն սեպագրով արտայայտելիս՝ հանրայայտ **Ջ - Զ**-ի կողքին նաև **Ջ - Շ** տառադարձում ենթադրելով) կարելի է մտածել, որ Հայկական լեռնաշխարհում սփռուած բազմաթիւ նշանաւոր տեղանունների **թիլ** բաղադրիչի իմաստն այնուամենայնիւ «բլուր», «լեռ» է՝ անկախ սէմական աշխարհից հեռու գտնուելուց (հմմտ. Հ. Հիւբշմանի կասկածը. «Կարելի էր աչքի առջև բերել ասոր. tell «բլուր», որ այնպէս յաճախ է Միջագետաց տեղոյ անուններում մէջ, բայց հաւանական չէ, որ արևմտեան Հայաստանի մէջ այսպէս տարածուած անուն մը ասորական ծագում ունենայ: Այս պարագային հայերէնի մէջ **թիլ** ըլլալու էր», *Հին Հայոց ցեղոյ անունները*, թարգմ. **Հ. Բ. Պիլէգիլձեան**, Վիեննա, 1907, էջ 349), իսկ բնիկ հայերէն **իջ** (-էջ) բաղադրիչի (հմմտ. **Գ. Բ. Զահուկեան**, *Հայոց լեզուի պատմութիւն. նախագրային ժամանակաշրջան*, էջ 72, 121) միացումով կազմուած տեղանունն արտայայտում է Սևանի (=Դիլիջանի) լեռնանցքի «ստորոտում» լինելու իմաստը: Զարգացած միջնադարի հայ մատենագրութեան մէջ հանդիպող **թիլ** – «բլուր», «հողաբլուր» բառը ևս Հր. Աճառեանը (*Հայերէն արմատական բառարան*, հտ. Բ, Եր., 1973, էջ 183-184) համարում է **ուշ** սէմական փոխառութիւն, սակայն **Թիլ**-ով վաղ տեղանունների առատութիւնը, թոյլ է տալիս փնտրել այլ տարբերակներ (խորհրդատութեան համար երախտագիտութիւնս են յայտնում Լևոն Տէր-Պետրոսեանին): Ի դէպ, հարաւային Արցախում Տողասարի լանջին գտնուող Գտչավանքի՝ **Թիլնայ վանք** անուանատարբերակի հիման վրայ (տե՛ս **Գ. Աթայեան**, *Տող բերդաքաղաքի պատմութիւն*, Եր., 2010, էջ 10-12) կարելի է քննարկել նաև **Թիլ** > **Տող** (տարբ. **Դող**) անցման հնարաւորութիւնը:

71 Տե՛ս **Ա. Յակոբեան**, *Պարմա-աշխարհագրական և վիճագրագիտական հետազոտութիւններ (Արցախ և Ուրիք)*, Վիեննա-Եր., 2009, էջ 317, 406:

72 Տե՛ս **Մովսիս Խորենացոյ Պատմութիւն Հայոց**, գլ. Ա.Ժ-Ժբ, էջ 32-42; գլ. Բ.ը, էջ 113-117; **Սեբէոսի Եպիսկոպոսի Պատմութիւն**, Չորրորդ տպագրութիւն... ի ձեռն **Ստ. Մալխասեանց**, Եր., 1939, գլ. Ա, էջ 2-6; *Պատմութիւն Սեբէոսի*, Աշխատասիրութեամբ **Գ. Աբգարեանի**, Եր., 1979, էջ 50-52:

73 «Իսկ Արամանեկայ առեալ զամենայն բազմութիւնս՝ խաղայ յարևելս հիւսիսոյ, և երթեալ իջանէ ի խորին դաշտավայր մի, ի բարձրագագաթանց պարսպեալ լեռանց, գետոյ կարկաջասահի յարևմտից ընդ մէջ անցանելով: Եւ զդաշտն արևելից գոգցես իմն իբրև որսայտեալ, ձիգ յարեգակն կոյս գերկայնութիւն պարգեալ. և առ ստորոտովք լեռանցն բազումք ականակիտ բղխեալ աղբիւրք, որք ի գետոց եկեալ հաւաքումն հեզարար...» (**Մովսիս Խորենացոյ Պատմութիւն Հայոց**, գլ. Ա.Ժա, էջ 39):

լալում «Այրարատեան» դաշտում, Շիրակում (Շարայ), Գուգարքում (Գուշար), Գեղաքունիքում (Գեղամ), բուն Սինիքում և Գողթնում (Սիսակ), Արցախում և Ուտիքում (Առան), Ծոփքում (Պասքամ, Տորք) են՝ հիմք դնելով **Հայկ** նահապետից «սերուած» և իր մէջ **Արարադ** երկրում (հմմտ. ուշ Բիւսինելէի **Ուրարտու/Արարատ** անուանատարբերակը)⁷⁴ աւելի վաղ բնակուող «մերագնացածների» միաւորած **հայ** «ազգին» և **Հայաստան** – **Արմենիա** «աշխարհին», ինչպէս որ դրանք ընկալում ու անուանում էին Պատմահայրն ու նրա բանաւոր և գրաւոր աղբիւրները: Այս որոշակի նմանութիւնը թոյլ է տալիս հայերի հետագայ ծագումնաբանական (էթնոգենետիկ) առասպելական-բանահիւսական պատկերացումների մէջ դիտարկել «հայ ազգի» (էթնոսի) կազմաւորման գործում **բիացիների** նշանակալից դերի մասին յիշողութիւնների պահպանումն ու արժևորումը⁷⁵, իհարկէ, ո՛չ այսօրուայ չափանիշներով ձգգրիտ տարբերակմամբ (համեմատութեան համար՝ մերօրեայ հասարակական պատկերացումներում և մասնագիտական գրականութեան մէջ գերիշխում է հայ ժողովրդի կազմաւորման գործընթացում լոկ վաղնջահայերէնի կրողների ունեցած դերի բացարձակացումը, որի հիմքում, ինչպէս նշում էր Ի. Դեակոնովը, **էթնոգենեզի** և **գլոտտոգենեզի** պարզ շփոթն է⁷⁶):

Դա բաւականին ձգգրիտ նկատել է արդէն բանասէր Մկրտ. Մկրեանը՝ 1967 թ. լոյս տեսած մի ընդարձակ յօդուածում. հմմտ. «ինչպէս Լէօն է շատ ձիշտ նկատել և մեկնաբանել, հնագոյն առասպելների և էպոսի այդ դրուագները [որոնց մէջ պատմում է Հայկի որդիների և թոմների, առհասարակ Հայկի սերնդի մարդկանց՝ Վանի շուրջը գտնուող երկրներից դէպի Հայաստանի հիւսիսային շրջանները տարածուելու մասին] զարմանալի հետևողականութեամբ արտացոլում են Բիւսինայի թագաւորների դէպի հիւսիս կատարած բազմաթիւ ու անընդհատ իրար յաջորդող արշաւանքները և նրանց նուաճումները»⁷⁷:

Տեղին նշենք, որ մեզ առաւել հաւանական է թում **Հայկ** անձնանունան Յովի. Կարագեօգեանի կողմից փաստարկուած ստուգաբանութիւնը, ըստ

74 Միշտ պէտք է նկատի ունենալ, որ ձևաորոտող հրեական-հինկտակարանեան աւանդոյթը (կամ նրա աղբիւրը) աչքի առաջ ունեցել է ուշ *Արարադ/Արարադ – Ուրարտու* երկիրը, որն ընդգրկում էր ողջ Հայկական լեռնաշխարհը և արդէն «վերածում» էր *Հայք – Արմենիայի* (տե՛ս ստորև, ծնթ. 122). այս **երկրում** էր ըստ աւանդութեան իջել Նոյեան տապանը, թաղուել Նոյը, այստեղ էին ապաստանել հայրասպան արքայազները են: Ի դէպ, Պատմահօր համեմատ Սերիոսն աւելի յաճախ է գործածում «երկիրն Արարադայ» արտայայտութիւնը (տե՛ս ծնթ. 72–ում նշուած կտորներում): Բայց երկու հեղինակների կողմից Ե–դարեան նոյն աղբիւրն օգտագործելու մասին մանրամասն տե՛ս **Հ. Պ. Անանեան, Սերէոսի Պապոնութեան գրքի մասին քանի մը լուսարանութիւններ**, Վենետիկ – Ս. Ղազար, 1972, էջ 81–108:

75 Էթնիկական ինքնագիտակցութեան համար ծագման ընդհանրութեան պատկերացման դերի մասին մանրամասն տե՛ս **Գ. Վ. Շելեպով, Общность происхождения – признак этнической общности**, – “Советская этнография”, 1968, N 4, с. 65–74; **Ю. В. Бромлей, Очерки теории этноса**, с. 186–192, 264:

76 **И. М. Дьяконов, К праистории армянского языка**, էջ 170: Թէպէտ նա էլ է երբեմն տուրք տալիս նոյն վրիպմանը. հմմտ. (ընդգծումները մերն են). «Մենք **էթնոս** կը համարենք մարդկային այն հանրոյթը, որը միաւորուած է **լեզուի միասնական ծագմամբ** և ընդհանուր մշակութային առանձնայատկութիւններով» (**И. М. Дьяконов, Алародии**, – ВДИ, 1995, N 1, с. 118): Հմմտ. վերևում, ծնթ. 4:

77 **Մ. Մկրեան, Հայ ժողովրդի կազմաւորման և հայ գրականութեան սկզբնաւորման հարցը**, էջ 43–44:

որի այն պարզապէս ծագում է հայերի ինքնանուանման ***հայիկ** տարբերակից՝ այս դէպքում ցեղանուն ցուցանող **իկ** մասնիկով (հետագայում՝ **ի** ձայնաւորի տղումով), ինչպէս նմանատիպ կազմութեամբ ունենք՝ **պարսիկ, հնդիկ, խուժիկ, դելմիկ, ռուզիկ** եւն⁷⁸: Գրականութեան մէջ արտայայտուած այլ վարկածների քննութիւնը ներկայ պահին դուրս է մեր խնդիրների շրջանակից:

4. Հայոց էթնոհամախմբման տարբերակի առանձնայատկութիւնները

Ըստ վերը նշուած ազգագրական տեսութեան (Յու. Բրոնլեյ եւն) մի կարևոր դրոյթի՝ էթնոհամախմբման եղանակով (այդ թում՝ նրա էթնոձուլախառնման-էթնոմիքսացիոն տարբերակով) կազմաւորուած էթնոսի կարևոր առանձնայատկութիւնն այն է, որ նրանում տարալուծուած (տրանսֆորմացուած) էթնիկական նախկին բաղադրիչների մօտ փոփոխում է միմիայն էթնիկ ինքնագիտակցութիւնը, այսինքն՝ «մենք»-ի ինքնութեան ներընկալումը, որը էթնիկ պատկանելիութեան վճռորոշ ցուցիչն է: Իսկ նրանց թէ՛ հոգևոր, թէ՛ նիւթական մշակոյթի տարրերը (բացի, իհարկէ, լեզուից) տևական ժամանակ փաստօրէն անխաթար պահպանում են նոր էթնոսի ձևաւորուող-ինտեգրացուող մշակոյթում (անշուշտ, դրանում իր դերն ունէր նաև հին ժամանակների «դանդաղ» ընթացքը, երբ հաղորդակցութեան թոյլ միջոցները արագ ձևափոխումների չէին բերում. մշակութային երևոյթների տարբերութիւններն էլ՝ յաճախ պայմանաւորուած նաև բնա-կլիմայական ու հասարակական պայմաններով՝ լեռնային-հարթավայրային, քաղաքային-գիւղական եւն, յատուկ բևեռացման պատկեր չէին ստեղծում ու փոխօտարման հիմք չէին դառնում, քանի որ առաւելապէս ինքնանուան մէջ դրսևորուող ու արտայայտուող «մենք» հասկացութիւնը նախ և առաջ արտածուած էր արդէն ընդհանուր լեզուից, իսկ մշակութային տարբերութիւններն ընկալում էին իբրև այդ ընդհանուր «մենք»-ի տեղական առանձնայատկութիւններ): Համեմատութեան համար նկատենք, որ էթնոէվոլյուցիայի տարբերակով ծաւալային նոր պատկեր ստացած էթնոսի մէջ կլանուող բաղադրիչները գրեթէ բացառապէս լոկ կենսաբանական-մարդաբանական լիցք են տալիս նրան, քանի որ էթնիկ ուծացումը հէնց հետևանքն է առաջին հերթին մշակութային (ինչպէս հոգևոր, այնպէս էլ նիւթական) անդիների կորստի:

Մեր դէպքում նախ պէտք է յիշել մի շարք հայ հնագէտների (Բաբկէն Առաքելեան, Գևորգ Տիրացեան, Գրիգոր Արեշեան, Հայկ Յակոբեան եւն) կարևոր դիտարկումները նիւթական մշակոյթի տարրերի ակնառու նմանութեան վերաբերեալ՝ «ուրարտական» և այսպէս կոչուած «վաղ հայկական» դարաշրջաններում, ընդ որում՝ այդ տարրերի տեղային, գաւառային առանձնայատկութիւնների երկարատև պահպանումով⁷⁹: Իհարկէ,

78 Տե՛ս **Յ. Կարազեղեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր արքիւրներում*, էջ 174: Հմնտ. նաև **Գ. Կապանյան**, *Историко-лингвистические работы*, т. II, Ер., 1975, с. 82; **А. Е. Петросян**, *Армянский эпос и мифология*, с. 64-69.

79 Տե՛ս **Գ. Ա. Տիրացեան**, *Ուրարտու և Հայաստան (Նիւթական մշակոյթի ժառանգորդութեան*

չիմանալով հայ էթնոսի կազմաւորման էթնոճուլախառնման տարբերակի իւրայատկութիւնը՝ նշուած հնագէտները տուեալ երևոյթին տալիս էին այլ մեկնաբանութիւններ, սակայն ներկայումս դրանք (մասնաւորապէս մշակութային տարբերութիւնների յղմամբ էթնիկ հաւաքականութեան աստիճանի մասին պնդումները) պէտք է համարուեն էական ճշգրտման ենթակայ:

Նախկին հաւաքական «մենք»-ը բնութագրող էթնանունները նրա փոփոխման դէպքում միշտ չէ, որ անհետանում են: Էթնոհամախմբման գործընթացի տարբեր փուլերում դրանք ձևափոխուում են՝ ամենից յաճախ վերածուելով տեղանունների (տոպոնիմ), երբեմն՝ անձնանունների (անտրոպոնիմ), երբեմն էլ դառնալով բնութագրիչ ածական (հաւանաբար՝ արտածուելով այդ նախկին էթնանունի կրողի նկատմամբ վերաբերմունքի կամ նրա որևէ յատկանիշի ընկալումից): Այժմ բերենք մի մատենագրական փաստ, որը դուրս է մնացել նախորդ ուսումնասիրողների տեսադաշտից, սակայն խիստ կարևոր եզրայանգումների հնարաւորութիւն է տալիս մեզ հետաքրքրող խնդրում՝ համախմբուող հայ էթնոսի առանձին բաղադրիչների նախկին ասանդոյթների, այդ թում նախկին էթնիկ անուանումների՝ բացի առատ տեղանունանցանկից նաև մատենագրութեան մէջ պահպանուած լինելն արձանագրելու առումով: «Սովերք Հայկականք»-ի ԻԲ պրակում Ղևոնդ Ալիշանի հրատարակած «Պատմութիւն սրբոյն Յակովբայ Մծբնայ հայրապետին» վարքում, որը թուագրելի է Ժ-ԺԱ դդ., սակայն հիմնուած է Ե դ. աղբիւրի վրայ, սրբի գերեզմանատեղի մասին կարդում ենք. «Եւ առեալ տանէին զնշխարսն [Յակոբ Մծբնացու] զառ ի վայր լերինն յերկիրն Ռշտունեաց, և նոյնժամայն արգելան, քանզի ոչ հնար եղև ումեք շարժել՝ ոչ գրաստով և ոչ մարդով, և ի զարմացման կային բազմութիւնքն զերիս ասուրս: Եւ ի տեսեանն հրեշտակ Աստուծոյ երևեալ՝ հրամայեաց իջուցանել ի տեղւոջն. և նկատեալ ի ձորակէն տեղի մի բարձրաւանդակ, և անդ հիմնարկութիւն առնէին սրբոյ եկեղեցոյ: ... Եւ սահմանն, ուր բնակեցաւ սուրբն Յակոբ՝ ընդ **Թրակացոց իշխանութեամբն** էր, որ այժմ կոչի **Սոգս իմա՝ Սոկս - Ա. Յ.**: Իսկ թագաւորն Հայոց, որ էր յազգէն Արծրունեաց, ի թռռանց Արդիմելէքայ⁸⁰ որդւոյ Սենաքերիմայ արքային Ատրեստանեայց, տայր գանձս և գնէր զտեղին, և շինէր փառագարդ եկեղեցիս, կարգէր քահանայս և կրանաւորս ի փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեանն»⁸¹: Ինչպէս տեսնում ենք, տուեալ վկայութեան մէջ ունենք Սոկսում ընդհուպ վաղ միջնադար «թրակացի» **մուշկերի** մասին յիշողու-

հարցի շուրջը), - ՊԲՀ, 1978, N 1, էջ 43-60; նոյնի՝ Հայերի ոչ հնդկրոպական նախնիները՝ խորրի ուրարտացիները և Ուրարտու - Հայաստան պրոբլեմը, - ՊԲՀ, 1985, N 1, էջ 202-204; **Բ. Ն. Առաքելեան, Գ. Բ. Զահուկեան, Գ. Խ. Սարգսեան, Ուրարտու - Հայաստան**, էջ 34-35; **Գ. Տիրացեան, Գ. Արեշեան, Հնագիտութիւնը և Ուրարտու - Հայաստան պրոբլեմը**, - ՊԲՀ, 1990, N 3, էջ 70-75; **Ա. Բորոյսեան, Ծովքը հին առաջաւորասիական առկարա-մշակութային համակարգում (մ. թ. ա. III հազարամեակի վերջ - II հազարամեակի առաջին կէս)**, Եր., 2000 (թեկնածուական ատենախօսութեան սեղմագիր); **Լ. Յակոբեան, Վանի թագաւորութեան և հին Հայաստանի մշակութային ժառանգութեան խնդիրները**, - «Յուշարձան» տարեգիրք, 2, Եր., 2010, էջ 197-208:

80 Միւս ձեռագիր օրինակում **Արդիմելէքայ (իմա՝ Արդամելէքայ - Ա. Յ.)**:

81 *Պատմութիւն սրբոյն Յակովբայ Մծբնայ հայրապետին*, - «Սովերք Հայկականք», ԻԲ, Վենետիկ - Ս. Ղազար, ՌՅԺ-1861, էջ 62-63:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Ե (ԺԱ) ԳԱՐԻ, ԹԻՎ 1 (41) հունվար-մայր, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

թեան պահպանման մի եզակի փաստ⁸²:

Նոյն համատեքստում լիովին կարող է ընկալուել ինչպէս բիացիների, այնպէս էլ ուրիշ էթնիկ բաղադրիչների ծագումնաբանական պատմութիւնների մուտքը կազմաւորուած հայ ժողովրդի էթնոգենետիկ պատկերացումների մէջ: Բացի քննարկուող Հայկեանների պատումից՝ կարելի է յիշատակել, օր.՝ Ք. ա. Դ դ. յոյն հեղինակների կողմից արձանագրուած (Ստրաբոնի մէջբերումներով)՝ Յասոնի ուղեկից Արմենոս Թեսալացու առասպելապատումը⁸³, որը կարող է համադրուել հայ էթնոսի համախմբման գործընթացի մասնակից մէկ այլ բաղադրիչի՝ **ուրումէացիների** ցեղի յայտնի տեղաշարժի հետ Ք. ա. ԺԲ դարում (ինչպէս որ այն ընկալուած է Հր. Աւետիսեանի կողմից)⁸⁴: Ստրաբոնի հատուածն է (Հր. Աճառեանի թարգմանութեամբ, մեր որոշ սրբագրումներով). «Ահա մի հին անհնարօրէն այս [հայ] ազգի մասին: Արմենոսը Թեսալիայի [Թեսալիկէի] Արմենիոն քաղաքից... ինչպէս ասացինք, Իասոնի հետ արշաւեց Հայաստան: Սրա անունով է [երկիրը կոչուած] Արմենիա, ինչպէս ասում են Կիւրսիլոս Փարսալացին և Մէդիոս Լարիսացին՝ Ալեքսանդրի գինակիցները: Նաև՝ թէ Արմենոսի հետ [եկածները] բնակուեցին Եկեղիքում [Ալիլիսէնէում], որը նախապէս Ծոփաց [Սոֆէնէի] տակ էր, միւսները՝ Սիւսպիրիտիսում⁸⁵ [և նրանից] մինչև Կալաքէնէ և Ադիաքէնէ, [որ] Հայաստանի սահմաններից դուրս [են]: Ասում են, թէ Հայոց զգեստը Թեսալական է... Ձիավարութեան մէջ էլ, ասում են, թէ Թեսալացիք [հայերի նման] մեծ սէր ունեն, և նրանց նման՝ նաև Մարերը [Մէդերը]: Իասոնի արշաւանքի մասին են [վկայում] նաև Իասոնական վկայարանները, որպիսիք կանգնեցրել են տիրակալները՝ մօտաւորապէս նման Իասոնի [վկայարանին], որ Աբդէրում [կանգնեցրել է] Պարմենիոսը»:

Նշենք, որ հայ էթնոսի կազմաւորման էթնոժողովրդային տարբերակն (իր վերը նշուած առանձնայատկութեամբ) ընդունելու դէպքում այն հին տեսակէտը, իբրև թէ տուեալ տեղեկութիւնը թոյլ է տալիս հաստատել, թէ հայերը (կամ նախահայերէնի կրողները) Առաջաւոր Ասիա են եկել Բալ-

82 Այս մուշկերի մասին վերջին անգամ տես **Ա. Վ. Քոսեան**, «Արևելեան և արևմտեան մուշկերի խնդիրը», – ՊԲՀ, 1996, N 1–2, էջ 207–218: Հմմտ. **Բ. Յարութիւնեան**, *Արեւմտեան Պարսկաստանի XVIII սաարապոյթեան տեղադրութեան շուրջ*, – «Հանդէս ամսօրեայ», ՃԺԳ տարի, Վիեննա, 1999, էջ 75–77; **Յ. Խորիկեան**, *Արեւմտեան Պարսկաստանի XIX սաարապոյթեան էթնիկական կազմի վերաբերեալ*, – ԲԵՀ, 2006, հմր 2, էջ 114–126:

83 Տես **Strab.** XI, 14, 12; **Ստրաբոն**, Քաղեց և թարգմանեց **Հ. Աճառեան** (Օտար աղբիւրներ հայերի մասին, N 1, Յունական աղբիւրներ), Եր., 1940, էջ 60–63: Նոյն պատումն աւելի համառօտ ձևով հաղորդում են նաև Ք. յ. Ա դ. պատմիչ Պոմպէյոս Տրոգոսը (յաջորդ դարի հեղինակ Յուստինոսի մօտ. **Vustin.** XLII, 2, 3) և Ե դ. բանաբարող Ստեփանոս Բիզանդացին («Էթնիկէ» երկում, Ἀρμενία բառի տակ)՝ յղելով այլուստ անծանօթ Անթիպատրոսին (ըստ՝ **Ն. Աղոնց**, *Հայաստանի պատմութիւն*, էջ 317–318): Այս պատումն, ի դէպ, ծանօթ էր է դարի հայոց «Աշխարհացոյց»-ի հեղինակին, որը գրում է. «ԺԱ. Բնաշխարհի Մակեդոնիա է՝ յելից կալով Յունական պեղագոսին, առ երի Դաղմատիոյ և Թրակայ. ունի լերինս վեց... գետք մեծամեծք վեց, և գաւառս երեսուն, և **գմեծն Թեսաղիա, յորմէ Հայք**» (*Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ*, էջ 17):

84 Տես **Հ. Մ. Աւետիսեան**, *Հայկական լեռնաշխարհի և հիւսիսային Միջագետքի պետական կազմաւորումների քաղաքական պատմութիւնը*, էջ 106–114:

85 Անշուշտ՝ **Սպեր** գաւառն է, անկախ որոշ ուսումնասիրողների խճողուած ենթադրութիւններից:

կաններից (Թեալիայից), կարելի է յաղթահարուած համարել⁸⁶: Միւս կողմից՝ այդ տարբերակը հնարաւորութիւն է ընձեռում նաև ենթադրել՝ գոնէ իբրև վարկած, որ Ստրաբոնի տեղեկատուները կարող էին մասամբ արձանագրած լինել մի իրական կենդանի պատկեր՝ հայ էթնոսի էթնոհամախմբման գործընթացին մասնակցած բաղադրիչներից մէկի՝ «թրակացի» մուշկերի նիւթական մշակոյթի որոշ տարրերի (այստեղ՝ հագուստի և ինչ-որ իւրայատուկ կառուցուածքով զոհարանների տիպի) երկարատև պահպանուած լինելը Հայաստանի կոնկրետ շրջաններում (բայց շեշտենք՝ միայն այդտեղ):

Որոշ հաւանականութեամբ՝ նոյնը, բայց արդէն սէմական ենթաշերտային (սուբստրատային) հնարաւոր բաղադրիչի հետ կապուած՝ կարելի է մտածել «Սասնայ ծռեր» ազգային էպոսի սկզբում արձանագրուած էթնոգենետիկ պատկերացումների վերաբերեալ, որոնցում Սասուն երկրի ծագումն ու հզօրացումն առնչուած է Սանասարի կերպարի հետ, որի հիմքում ընկած է Ասորեստանի Սիննալների-Սենեքերիմ արքայի (=սէմական աշխարհը ներկայացնող «Բաղդադի խալիփայի») հայրասպան որդու պատմութիւնը (Ք. ա. է դար)⁸⁷:

Նման տարբերակով եզրայանգումների կարող են բերել նաև Մովսէս Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի Ա. գ. գլխում ներկայացուած (յղելով Ք. ա. Ե դ. յոյն հեղինակ Օլիմպիոդորոսին) էթնոծագումնաբանական (էթնոգենետիկ) պատկերացումները: Ըստ Պատմահօրը հասած տեղեկատուութեան՝ Քսիստիթէսը, այսինքն՝ Նոյի որդի Սէմը, հասել էր Տաւրոսի լեռներին և իր անունով կոչել դրանք **Սիմ**, նրա կրտսեր որդիներից մէկը՝ Տարբանը, հասել էր Տարոնի (Տարան) դաշտն ու այն կոչել իր անունով, իսկ Տարբանի եղբայր Ջրուանից էլ իր անունն էր ստացել Ջարուանդ, այսինքն՝ Ջարևանդ գաւառը⁸⁸ (աշխարհացոյցեան Մեծ Հայքի Պարսկահայք նահանգի հիւսիսում, մինչև Երասխ):

Ընդհանրապէս, գրականութեան մէջ նկատուած է, որ մեզ հասած հայկական դիցաբանական պատկերացումների մասին ներկայումս արձանագրուող նիւթերը (եւ մատենագրութեան մէջ, եւ բանահաւաքչական տարբերակով) բաւական մեծ ծաւալով զուգորդում են շրջակայ թէ՛ հնդեւրոպական, թէ՛ սէմական, խուրիական ու կովկասեան հին էթնոսների դիցաբանութեան հետ⁸⁹: Եւ դա, ամենայն հաւանականութեամբ, պիտի բացատրուի ոչ միայն սովորական (պատահական) փոխադարձ առնչութիւններով կամ պարզօրէն՝ դիցապատկերների «տարածաշրջանային» գործառնամարզերով, այլ աւելի շատ նրանով, որ էթնոձուլախառնման

86 Հմմտ. Նիկ. Յարութիւնեանի վերջին ամփոփումը. «Հայերի էթնոգենետիկ վերաբերեալ ժամանակին առաջ քաշուած միգրացիոն տեսութիւնը Բալկաններից՝ հայերէնի հնդեւրոպական լեզու լինելու հիմքի վրայ, վաղուց ապրել է իր դարը» (**Ն. Յարութիւնեան**, Հին հայկական տեղանուններն ու ցեղանունները սեպագիր աղբիւրներում և նրանց պատմական արմատները, – ՄՄԱԵԺ, XX, Եր., 2001, էջ 181):

87 Սիննալների արքայի (Ք. ա. 705-681) որդիների պատմութեան մասին մանրամասն տեն **Ն. Ադոնց**, *Հայաստանի պատմութիւն*, էջ 128-131:

88 Տեն՝ **Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց**, գլ. Ա. գ, էջ 25-26:

89 Տեն, օր.՝ **А. Петросян**, *Армянский эпос и мифология. Истоки. Миф и история*, Ер., 2002 (նախօրինակը՝ **A. Y. Petrosyan**, *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, Washington, 2002).

եղանակով հայ էթնոսի մէջ (հէնց այդպէս է նաև նմանակազմ այլ էթնոսների դէպքում) համախմբուած եւ նրան մաս կազմած (այսինքն՝ նախնական էթնիկ ինքնագիտակցութիւնը փոխած) բաղադրիչներն էապէս պահպանել են իրենց բնիկ, յաճախ՝ հազարամեակներ առաջ ձևաւորուած դիցարանական պատկերացումները: Տեղին մանրամասնենք, որ վերջիններիս մի մասը կազմաւորուած էթնոսի հետագայ մշակութային ինտեգրացիայի արդիւնքում կարող էր վերածուել ընդհանուրի, «համահայկականի», իսկ միւս մասը՝ շարունակել մնալ զուտ տեղական:

Այս ենթատեքստում մի ուշագրաւ դիտարկման հնարաւորութիւն է նկատուում հայ գրադաշտականութեան ընկալման առումով: Հայաստանը բիաինական սինկրետիկ դիցարանին⁹⁰ փոխարինած գրադաշտական կրօնն⁹¹ ընդունել էր, ամենայն հաւանականութեամբ, Մարական թագաւորութեան հետ փաստօրէն միաժամանակ (այլ ոչ թէ Մարաստանի տիրապետութիւնը ճանաչելուց յետոյ), ըստ ամենայնի՝ հէնց Է դ. վերջերին: Ք. ա. Ե դ. առաջին կէսին մեզանում այդ կրօնի ամրապնդման մի կարևոր դրուագի (Աքեմենեան Քսերքսէս արքայից արքայի «հակադեական» միջոցառումներին) յատուկ անդրադարձել է Յովհ. Կարազեոզեանը⁹²: Սակայն անտիկ և վաղ հայկական աղբիւրներում արդէն Ք. ա. Զ դ. սկզբների համար արձանագրուած հայ թագաւորների գրադաշտական-իրանական անուններից (**Երուանդ** <arvand, **Շաւարշ** <Syāvaršan, **Տիգրան** <tyri nē⁹³) երեւում է, որ կրօնական համակարգի փոփոխութիւնը պիտի տեղի ունեցած լինէր դրանից էլ բաւականին առաջ: Արդ, խնդրոյ առարկայ էթնոհա-

90 Ի դէպ, Ք. ա. Թ դ. վերջերին այդ սինկրետիկ պանթէոնի ձևաւորումը (նրա մասին մանրամասն տես **Գ. Բ. Զահուկեան**, *Հայկական շերտը նորարարական դիցարանում*, էջ 43-58; նոյնի՝ *Լեզուական նոր տրուակներ հայոց նախաքրիստոնէական կրօնի և հաւաքայիքների մասին*, - ՊԲՀ, 1992, N 1, էջ 23-24; **Ս. Գ. Հմայակեան**, *Վանի թագաւորութեան պելուսկան կրօնը*, Եր., 1990) բիաինական-նորարարական բազմացեղ հասարակութեան համախմբման (նաև՝ էթնիկ-տեգրացիայի) սկզբի կարևորագոյն ցուցիչներից է: Հմմտ. **Փ. Եր-Մարտիրոսով**, *Образование царства Армения*, - ИФЖ, 2004, N 1, с. 271 («Մենուայի բարեփոխութեամբ աստուածների համապետական պանթէոնի ստեղծումը պետութեան բոլոր էթնիկ տարրերի՝ թէոֆոր եղանակով միաւորման փորձի ձևակերպումն էր»):

91 Հայ գրադաշտականութեան մասին տես **Մ. Էմին**, *Վէպք հնոյն Հայաստանի*, Մոսկուա, 1850; նոյնի՝ *Մովսէս Խորենացին և Հայոց հին վէպերը*, Թիֆլիս, 1886; **Հ. Ղ. Ալիշան**, *Հին հաւաքը կամ հեթանոսական կրօնը Հայոց*, Վենետիկ - Ս. Ղազար, 1895; **Հ. Գեյզեր**, *Հերազոցութիւն հայ դիցարանութեան*, Թարգւմ. **Յ. Թորոսեան**, Վենետիկ - Ս. Ղազար, 1897; **M. Ananikian**, *Armenia (Zoroastrian)*, - Encyclopaedia of Religion and Ethics, Vol. 1, Edinburgh, 1908, с. 794-802; նոյնի՝ *Armenian Mythology*, - The Mythology of all Races, Vol. 7, New York, 1964, с. 5-100; **Ն. Տաղավարեան**, *Հայոց հին կրօնները*, Կ. Պոլիս, 1909; **J. R. Russell**, *Zoroastrianism in Armenia*, Cambridge MA-London, 1987; **Ս. Բ. Յարութիւնեան**, *Հայ աստապելլարանութիւն*, Պէյրութ, 2000: Նշելի է, որ հայ հեղինակները Ղ. Ալիշանի օրինակով այժմ էլ դեռ խուսափում են անտիկ շրջանի հայկական դիցարանի գրադաշտական բնոյթի լիարժէք վերհանումից (ուստի՝ հմմտ. նաև **В. И. Абаев**, *Скифский быт и реформа Зороастра*, - "Archiv Orientalni", XXIV, N 1, Praha, с. 23-56; **М. Дрезден**, *Мифология Древнего Ирана*, Пер. с английского **И. М. Стеблин-Каменского**, - Мифологии Древнего мира, Москва, 1977, с. 23-56; **Ա. Փերիխանեան**, *Ջրադաշտականութիւն*, - ՀՍՀ, հտ. 3, Եր., 1977, էջ 710-711; **М. Бойс**, *Зороастрийцы: верования и обычаи*, Пер. с английского **И. М. Стеблин-Каменского**, Москва, 1987; **И. В. Рак**, *Мифы Древнего и раннесредневекового Ирана*, СПб.-Москва, 1998):

92 Տես **Յ. Կարազեոզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 288-290:

93 Տես **Հ. Աճառեան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Բ, Եր., 1944, էջ 145; հտ. Դ, Եր., 1948, էջ 155; հտ. Ե, Եր., 1962, էջ 146; **Գ. Բ. Զահուկեան**, *Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» առաջին գրքի անձնանունների լեզուական աղբիւրները*, - ՊԲՀ, 1981, N 3, էջ 57-59:

մախմբման էթնոճուլախառնման տարբերակը, թույլ է, հնարաւորութիւն է տալիս մեկնաբանել հայկական գրադաշտականութեան ամենից ակնառու իւրայատկութիւնը՝ այդ պանթէոնի հիմնական աստուածների սրբավայրերի տեղաբաշխումը աշխարհացոյցեան Բարձր Հայք նահանգի գաւառներում, այսինքն՝ Վասպուրականի ու Այրարատի պետական կենտրոններից բաւականին հեռու: Այսպէս՝ Ագաթանգեղոսին և Սովսէս Խորենացուն հասած տեղեկութիւնների համաձայն՝ Բարձր Հայքի Դարանաղէաց գաւառի Անի ամրոցաւանում գտնուում էր գրադաշտական գլխաւոր աստուած Արամազդ-Ահուրամազդայի (յունարէն տարբերակներով՝ **Կրոնոս, Ջևս-Դիոս**) մեհեանը, որի մօտ էին նաև Հայոց արքաների գերեզմանները («ի թագաւորաբնակ կայեանսն հանգստոցաց թագաւորացն Հայոց»)՝⁹⁴ իսկ Թորդան գիւղում՝ «սպիտակափառ» Բարշամին աստծու (յունարէնում և Խորենացու մօտ՝ նոյնը, բայց յուն. Վարքում՝ **Հռեա-Քեաս**) մեհեանը՝⁹⁵, Եկեղեց գաւառի Երէզ-Երիզայ ւանում գտնուում էր Անահիտ աստուածուհու (յունարէն տարբերակով՝ **Արտեմիս**) գլխաւոր մեհեանը, իսկ Թիլում՝ Արամազդի դուստր Նանէի (յունարէն տարբերակով՝ **Աթէնաս**) մեհեանը՝⁹⁶, և վերջապէս՝ Դերջան գաւառի Բագայառիձ (կամ **Բագառիձ**, Խորենացու մօտ՝ **Բագայառիձ**) գիւղում էր գտնուում Արամազդի որդի Միհրի (յունարէնում և Խորենացու մօտ՝ **Հեփեսոս**, բայց յուն. Վարքում՝ **Դիոնիսոս**) մեհեանը՝⁹⁷: Բարձր Հայքից դուրս էին գտնուում միայն Անահիտ-Արտեմիսի

94 Ստորև ներկայացուող մեկնաբանութեան լոյսի ներքոյ պէտք է նոտածել, որ նման հարևանութեան պատճառը եղել է ոչ այլ ինչ, քան պարզապէս աշխարհիկ գերագոյն առաջնորդներին պաշտօնական դիցարանի գլխաւոր սրբատեղիում յուղարկաւորելու՝ նաև այլոյր տարածուած միտումը (այլ ոչ թէ հակառակը): Ուշագրաւ է, որ քրիստոնէութեան ընդունումից յետոյ նոյն Դարանաղի գաւառի Անիից ոչ հեռու՝ Թորդանում և Թիլում են թաղուել հայ առաջին կաթողիկոսները՝ Գրիգոր Լուսաւորչից մինչև Ներսէս Մեծ:

95 Այս աստծու իրական իրանական անունը, թերևս, ժողովրդական վերաիմաստաւորման արդիւնքում վերածուել է մականունան. *Սպենտա-փառնա – «Սպիտակ-ա-փառն» (**Խուանա-Փառ** գրադաշտական աստուածութեան մասին տես, օր.՝ **И. В. Рак, Мифы Древнего и раннесредневекового Ирана**, с. 135-136, 515-516): Մինչև է դար պահպանուած գրոյցի «յարդ»-ը, որ Վահագնը «գողացել էր» Բարշամիից (տես **Անանիա Շիրակացի, Տեղեկագիրքներն և արտաքին**, Աշխատասիրութեամբ Ա. Գ. Արրահամեանի, Եր., 1940, էջ 37), հմնտ. գրադաշտական **արտա**-ի հետ՝ «ճշմարտութիւն», «Սուրբ կարգ» (տես **И. В. Рак, Мифы Древнего и раннесредневекового Ирана**, с. 5-8, 455): Ի դէպ, Հր. Խառատեանի բանաւոր հաղորդմամբ, ըստ կամախցիների յետեղասպանական յուշագրութիւնների՝ Բարշամիը «պաշտուում էր» Թորդանի շրջանի քրիստոնէայ հայերի կողմից մինչև Ի դ. սկիզբը (այդպէս՝ նաև Անահիտը՝ Դերսիմի հայերի կողմից):

96 Հայկականացուած Նանէն, անկախ նրա անուան՝ գրականութեան մէջ նկատուած ուշագրաւ համադրումներից, ամենայն հաւանականութեամբ, համապատասխանում էր իրանական-գրադաշտական դիցարանի **Դաէնա-Դեն** աստուածուհուն, որն Ահուրամազդայի դուստրներից մէկն էր: Նրա մասին տես՝ **И. В. Рак, Мифы Древнего и раннесредневекового Ирана**, с. 132, 470-471:

97 Տես **Ագաթանգեղայ Պարմութիւն Հայոց**, Աշխատութեամբ **Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց**, Տիլիս, 1909, էջ 408-410 (§ 784-786), 411-412 (§ 790); **G. Lafontaine, La version grecque ancienne du livre arménien d'Agathanghe. Édition critique**, Louvain, 1973, p. 300-303 (§ 131-133); **G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathanghe**, Rome, 1946, p. 77-80 (§ 108-115): Վերջին բնագրի (որն Ագաթանգեղոսի երկի վաղ տարբերակն է՝ անուանուած «Գրիգորի Վարք» և, ցաւօք, մեզ հասած միայն յունարէն, արաբերէն և քարշունի թարգմանութիւններով) հայերէն թարգմանութիւնը տես **Ագաթանգեղոսի պարմութեան յունական նորայայտ խմբագրութիւնը (Վարք)**, թարգմ. յունարէն բնագրից՝ **Հ. Բարթիկեանի**, Առաջաբան և ծանօթագրութիւններ՝ **Ա. Տէր-Ղևոնդեանի**, – «Էջմիածին», 1966, է, էջ 28-34, Ը, էջ 46-51, Թ-Ժ, էջ 79-87: Հմնտ. **Սովսիսի Խորենացու Պարմութիւն Հայոց**, Բ.Ժր. էջ 122-123, գլ. Բ.Ժդ, էջ 127-128:

մի բազինը Արտաշատ մայրաքաղաքում («գրագին [1 ձեռ. գրագինսն] Անահտական դիցն»), նրանից ոչ հեռու՝ Երազամոյն վայրում՝ Տիր-Ապոլոն աստծու մեհեանը («Երազացոյց երազընդիան [1 ձեռ. և Խոր.՝ երազահան] պաշտաման Տրի դից դպրի, գիտութիւն [1 ձեռ. գիտութեան] քրմաց անուանեալ Դիւան՝ գրչի Որմզդի ուսման ճարտարութեան մեհեան»)՝⁹⁸, ինչպէս նաև երեք բազիններ Տուրուբերան նահանգի Տարօն գաւառի Աշտիշատ ասանի մօտ, Քարքէ լեռան լանջին գտնուող Վահէվահեան (ըստ 1 ձեռագրի՝ **Վահէվանեան**) մեհեանում. դրանցից առաջինը նուիրուած էր Վիշապաքաղն Վահագնին (յունարէն տարբերակով՝ **Հերակլէս**), երկրորդը՝ «Ոսկեհատ Ոսկեմար դից»-ին՝⁹⁹, երրորդը՝ Վահագնի տարփածու Աստղիկ-Ափրողիտէին («Երեք բազինք ի նմա. առաջին մեհեանն՝ Վահէվահեան, երկրորդն՝ Ոսկեմար Ոսկեծին դից, և բազինն իսկ յայս [2 ձեռ.՝ յայս անուն] անուանեալ Ոսկեհատ Ոսկեմար դից, և երրորդ մեհեանն՝ անուանեալ Աստղկան դից, Սենեակ Վահագնի կարդացեալ, որ է ըստ յունականին Ափրողիտէս»)՝¹⁰⁰:

Նշուած արտառոց իւրայատկութիւնը նկատուած է ո՛չ միայն նոր գրականութեան մէջ¹⁰¹: Դեռևս Ե դարում Մովսէս Խորենացին փորձել է ինչ-որ տրամաբանական բացատրութիւն գտնել դրան՝ կապելով Հելլադայից Արտաշէս և Տիգրան արքաների բերած քրմերի քմահաճութեան հետ («Իսկ քրմացն, որ եկեալ էին ի Յունաց, **զմտաւ ածեալ, զի մի ի խորագոյն Հայս վարիցին՝ պատճառեցան ըղձութիւնս, իբր թէ դիքն անդէն կամիցին զբնակիլն: Որում հաւանեալ Տիգրան՝** կանգնեաց զՈղիմպիական պատկերն Դիոսի յամուրն Անի, և զԱթենայն ի Թիլ, և զԱրտեմիդայ զմիւս պատկերն յերիզայ, և զԵփեստուն ի Բագայառինջ: Բայց զԱփրողիտեայ պատկերն, իբրև Հերակլեայ տարփատրի, առ նորին պատկերին Հերակլեայ հրամայեաց կանգնել յԱշտից տեղիսն»)՝¹⁰²: Սակայն ինչքան էլ սրամիտ լինի Պատմահօր բացատրութիւնը, այն չի համարում հաւաստի պատմական իրողութիւն, քանի որ հայկական հեթանոսական

98 **Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց**, էջ 404 (§ 778); **G. Lafontaine**, *La version grecque ancienne du livre arménien d'Agathanghe*, p. 297-298 (§ 128-129); **G. Garitte**, *Documents pour l'étude du livre d'Agathanghe*, p. 75-76 (§ 103-104): Ի դէպ, Տիրի մեհեանի նկարագրութեան մէջ **Որմզդ** անուանաձևի օգտագործումը (**Արամազդի** փոխարէն) յուշում է, որ տուեալ պաշտամունքային կենտրոնը համեմատաբար ուշ է ձևաորուել (թերևս՝ ներմուծուել): Հմմտ. **А. Е. Петросян**, *Армянский эпос и мифология*, с. 144:

99 Գուցէ իրականում նրան է վերաբերում «Սպիտակափառն» Բարշամինին յուն. Վարքում վերագրուած իգական **Հռէա** աստուածանունը, որն ուշ անտիկ շրջանում տրուում էր փոքրասիական հինաւորց Մայր-աստուածուհի **Կիբելային**՝ հետագայում համադրուած **Արդվիսուրա Անահիտի** հետ (նրանց մասին տես՝ **И. В. Рак**, *Мифы Древнего и раннесредневекового Ирана*, с. 484), ինչպէս երևում է նաև Մովսէս Խորենացու տեղեկութիւններից (Արտեմիս-Անահիտի արձանը «յԱշտից տեղիսն» տանելու մասին):

100 **Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց**, էջ 421-422 (§ 809); **G. Lafontaine**, *La version grecque ancienne du livre arménien d'Agathanghe*, p. 310-311 (§ 140); **G. Garitte**, *Documents pour l'étude du livre d'Agathanghe*, p. 95-96 (§ 155-158): Ի դէպ, յուն. Վարքը Տարօնում նշում է միայն Ափրողիտէի, այսինքն՝ Աստղիկի մեհեանը:

101 Տես **А. Е. Петросян**, *Армянский эпос и мифология*, с. 138-139.

102 **Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց**, գլ. Բ.Ժդ, էջ 127-128: Շարունակութեան մէջ՝ նաև. «Ինքն իջանէ ի Միջագետս, և գտեալ անդ զԲարշամինայ զպատկերն, զոր ի փղոսկրէ և ի բիրեղէ կազմեալ էր արծաթով՝ հրամայէ տանել կանգնել յաւանին Թորդան»: Հմմտ. նաև նախորդի, գլ. Բ.Ժբ, էջ 122-123:

սրբավայրերն իրենց տեղում էին Տիգրան Մեծից դարեր առաջ: Փոխարե-
նը՝ հաւանական է թույլ տալ տարբերակը, որ Իրանի արևելքում (ուսում-
նասիրողների մեծ մասի կարծիքով՝ Դրանգիանա-Ջարանգա երկրամա-
սում) Ք. ա. Թ-Է դդ. միջակայքում Ահուրամազդա-Արամազդ (իմա՝ «Տէր
իմաստուն») գլխաւոր աստծու կերպարը **ստեղծած**¹⁰³ Ջրադաշտ (Ջարա-
տուշտրա, Ջորոաստր) մոգի դուալիստական կրօնական ուսմունքն իր յա-
ջորդ՝ «Մեծ Աւեստայի» ձևաւորման փուլում (երբ նախկին կարգավիճակը
վերստացան հին, հնդ-իրանական աստուածները՝ Անահիտը, Վահագնը,
Միհրը են¹⁰⁴) և ինչ-ինչ քննարկելի հանգամանքներում թափանցել է Բիա-
ինելէի արքաների կողմից համեմատաբար ուշ նուաճուած Բարձր Հայքի
տարածքը: Այստեղ այն, ինչպէս երևում է, բարեյաջող պահպանուել է էթ-
նոմուլայիստման տարբերակով հայ էթնոսի համախմբման «յորձանու-
տում» (շնորհիւ այդ տարբերակի վերոնշեալ էթնոմուլայիստական
նայատկութեան՝ այլ շրջաններում էլ, թերևս, պահպանուել է ուրիշ աս-
տուածների պաշտամունքը, օր.՝ Այրարատում նախահայախօս ցեղերի
աստուածներից մէկի՝ Արայ Գեղեցիկի), և երբ հզօր աւագ դաշնակից
դարձած Մարաստանի՝ Ք. ա. Է դ. վերջերին «պետականօրէն գրադաշտա-
կանացման» պահին Բիաինելէ-Ուրարտու – Հայքում ևս (մարերի միւս
դաշնակիցների պէս, օր.՝ Պարսքի) «խոհեմաբար» անցում են կատարել
Ջրադաշտ մոգի ուսմունքին, դա արել են արդէն «սեփական»՝ **բարձրիա-
քեան** հիմնաբազայի վրայ: Ջուտ իբրև վարկած՝ կարելի է հնարաւոր հա-
մարել, թէ վերջին հանգամանքը պայմանաւորուած է եղել նաև ինչ-ինչ
խնամիական կապերով, այսինքն՝ կրօնական անցումն իրագործած ար-
քայի մայրը, գուցէ, Բարձր Հայքի կողմերից է եղել:

Տեղին մի փոքր մանրամասնենք, որ Բարձր Հայքի տարածքում տեղո-
րոշում է Ռուսա Բ-ի՝ Արծկէի վնասուած սեպագրում յիշուած **Խալխոու**
երկիրը («^{KUR}Mu-uš-ki-ni, ^{KUR}Ha-te-e ^{KUR}Ha-li-šu»), որին, անկասկած, համա-
պատասխանում են անտիկ աղբիւրներում յայտնի **խալդայներ** ցեղանունը
և հայկական աղբիւրների **Խաղտիք** ցեղանուն-երկրանունը¹⁰⁵: Ընդ որում
նոր աշխատանքներում փաստարկուում է, որ վերջինիս բնակչութիւնը հնդ-
երոպայախօս է եղել¹⁰⁶: Նկատուած է նաև, որ **խալդայներն** ինչ-որ կապ

103 Այլ տեսակէտ տնէ **Ж. Дюмезиль, Верховные боги индоевропейцев**, Москва, 1986, с. 31, 210; **С. Г. Амаякян, Варуна-Ахурамазда и Уарубаине-Багмашту**, – МИКЭАНСО, Ер., 1990, с. 48-49.

104 Հնդ-իրանական էթնիկական ընդհանրութեան ժամանակներից պաշտուող այս աստու-
ածներին ինքը՝ Ջրադաշտ մարգարէն, «մերժել» էր՝ իբրև «դևերի»: Ի դէպ, հետագայ դարերում
Իրանի աշխարհիկ ու հոգևոր տիրակալները մի քանի անգամ փորձել են վերականգնել
Ջրադաշտի «մաքուր» հաւատքը («դէնը»), և հաւանական պէտք է համարել, որ այդ փորձերը
որոշակի դիմադրութեան են հանդիպել Հայաստանում, ուր գրադաշտականութիւնն իր՝
տեղական տարբերով հարստացած և մասամբ հելլէնականացուած տարբերակով հասցրել
էր, ըստ ամենայնի, ազգային կրօնական համակարգի վերածել:

105 Տնէ **Н. В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей**, с. 336, 507; **Յ. Կարազեղեզան, Հայկական լեռնաշխարհի սեպագիր աղբիւրներում**, էջ 177-178: Հմմտ. նաև՝
Ս. Տրեմեանի «Ուրարտու պետութիւնը. 860-590 թթ. մ. թ. ա.» քարտէզում և **Յ. Խորհիկեան, Արեւմտեան Պարսկաստանի XIX սալարայութեան էթնիկական կազմի վերաբերեալ**, էջ 118:

106 Տնէ **С. Г. Петросян, Древнейшие названия Черного моря, озер Урмия и Ван в свете мифологических представлений древних армян**, – ВОН, 1986, N 4, с. 53-64; **Յ. Կարազեղեզան, Հայկական լեռնաշխարհի սեպագիր աղբիւրներում**, էջ 178-181 (ի դէպ, հեղինակը սկիւթական տարրի մուտքն այս շրջաններ հնարաւոր է համարում դեռևս Ք. ա. Թ դարից); **Բ. Յ. Յարու-
թիւնեան, Հայաստանի, հայ-իրանական յարաբերութիւնների և Առաջաւոր Ասիայի հնագոյն**

ունեն վաղ շրջանում այս տարածք ներթափանցած իրանալեզու **սկիւթների** հետ, քանի որ յունարէն Աստուածաշնչի մի հատուածի **սկիւթներ** էթնանունը հայերէնում թարգմանուել է «Խաղտիք» («εἰ καὶ ἐπὶ Σκοθῶν ἔλεγον ἀπηλύθησαν» – «թէպէտ առաջի **Խաղտեաց** դատ վարէին»)՝¹⁰⁷:

Փոքր Ասիայի արևելքում կիմերա-սկիւթական զանգուածների [Gimirāia]՝ գոնէ իշխող խաւի մէջ հիմնատրուելու առումով (որը և, մեծ հաւանականութեամբ, կարող էր բերել գրադաշտական դիցարանի ներմուծման) հմնտ. Արամ Քոսեանի ամփոփումը. «Մ. թ. ա. VII դարի առաջին կէսին այստեղ յիշատակուող Մելիդի, Թաբալի և Խիլակկուի պետութիւնները, անկասկած, այլ էթնիկական բովանդակութիւն ունէին: Այդ մասին պարզորոշ վկայում են ինչպէս դրանց արքաների ոչ խեթա-լուվիական անունները (Գուրդի, Մուգալլու, Իշկալլու), այնպէս էլ լուվիական պետութիւններում լայնօրէն կիրառուող պաշտօնական գրի (փոքրասիական հիերոգլիֆիկայի) ասանդոյթի կտրուկ ասարտը»՝¹⁰⁸:

Հայ էթնոսի կազմաւորման էթնոմուլտիստանման (էթնոմիքսացիայի) տարբերակի և հայերէն լեզուի՝ բիաինալիսու միջավայրում տարածուած նախահայերէնի կոյնէին յանգելու մասին՝ վերը քննարկուած դրոյթի լոյսի ներքոյ հնարաւոր է դիտարկելի համարել նաև լեզուաբանական հետևեալ վարկածը. էթնոհամախմբման գործընթացում տարածուող կոյնէի՝ տեղերում ընկալման ժամանակ ձևատրուող հարուստ (ըստ վերը նշուած ազգագրագետ-տեսաբանների յատուկ դիտարկման) բարբառային առանձնայատկութիւնների շրջանակում (իսկ հայերէնի բարբառների առատութիւնը, ինչպէս նաև նրանց նշանակութիւնը մայրենի լեզուի լիարժէք ընկալման համար նշում էին դեռևս վաղ միջնադարեան հայ քերականները¹⁰⁹) պէտք է պահպանուած լինէին լեզուական բազմաթիւ մնացորդներ, որոնք հայ լեզուաբանութեան մէջ իրաւամբ գնահատուել են իբրև ազգակցութեան ցուցիչներ այս կամ այն լեզուների հետ, օր.՝ փոքրասիական-միջերկրածովեան, ինչպէս մանրամասնած է Հր. Մարտիրոսեանի ուսումնասիրութիւններում¹¹⁰: Այսինքն՝ ներկայումս պիտի քննարկելի համարել այն տարբերակը, որ դրանք կարող էին ձևատրուող էթնոսի ընդհա-

պարմութեան մի քանի խնդիրների շուրջ, Եր., 1998, էջ 61-62:

107 Բ Մակար. Գ, 47: Հմնտ. Ն. Աղոնց, *Հայասրանի պարմութիւն*, էջ 305 (հեղինակը յղում է նաև Էսքիլէսին, ըստ որի՝ **խաղտայների** հետ անընդհատ շփոթուող **խալիթները** «**Սկիւթական** գաղութարնակներ» են. «Χάλυβοι Σκοθῶν ἄποικοι»); Բ. Ա. Арутюнян, *Об этнической принадлежности населения бассейна реки Чорох*, – ИФЖ, 1998, N 1-2, с. 244-245:

108 Ա. Վ. Քոսեան, *Արամ նահապետը Կապադոկիայում (Մի վարկածի ստիւ)*, – ՊԲՀ, 1999, N 1, էջ 241:

109 Տէն Է-Ը դդ. գիտնական-եպիսկոպոս Ստեփաննոս Սիւնեցու մօտ. «Եւ դարձեալ գքո լեզուիդ գիտելն գրովանդակ գբառնն զեզերականս՝ որպէս զԿորճայն և զՏայեցին և զԽոթային և զՉորրորդ-Հայեցին և զՍպերացին և զՍիւնին և զԱրցախայինս. այլ մի՛ միայն զմիջերկրեայսն և զոտանիկսն, վասն զի պիտանիք այտոքիկ են ի տաղաչափութեան, այլև ազտակարք ի պատմութիւնս, զի մի՛ վրիպեսցի անընդել գոյով լեզուացն» (Ռ. Ածոնի, *Дионисий Фракийский и армянские толкователи*, Петроград, 1915, с. 187): Հմնտ. նաև **Եսայի Նչեցի**, *Վերլուծութիւն քերականութեան*, Աշխատասիրութեամբ Լ. Գ. Խաչերեանի, Եր., 1966, էջ 65:

110 Տէն **Ի. Կ. Martirosyan**, *Etymological dictionary of the Armenian inherited lexicon*, Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series, 8), 2010, p. 805-807; նոյնի՝ *Mediterranean-Pontic Substratum Words in Armenian*, – “Aramazd”, N 2, Yer., 2007, p. 88-123: Հմնտ. նաև **Գ. Բ. Զահուկեան**, *Հայոց լեզուի պարմութիւն. նախագրային ժամանակաշրջան*, էջ 306-311:

նուր լեզուի մէջ մտնել հէնց **սեփական բարբառներից**, նշուած օրինակի դէպքում՝ նախ և առաջ Միկսի «մուշկական» բարբառից: Վերջինիս առիթով յիշենք նաև Յովի. Կարագեօզեանի եզրայանգումը. «Հին յունական հեղինակը **իմա՝** Բ. ա. Դ դ. բժիշկ, մաթեմատիկոս և աստղաբաշխ Եդոքսոս Կնիդացին, որի «Երկրագրութեան» մէջ ասում էր... Ἀρμένιοι... τῆ φωνῆ πολλὰ φρυσίζουσι («Հայերը խօսքի մէջ շատ են փոխաբանում /φριγισιζουσι – փոխաբերեն են «ջարդում»/»)»¹¹¹ – **Ա. Յ.** տուեալ դէպքում նման հետևութեան էր յանգել, հաւանաբար, այն պատճառով, որ հայացած թրակացիների լեզուում Հայկական լեռնաշխարհի հարաւ-արևմուտքում, որտեղ անցնում էր Դարեհ Ա-ի կողմից (522–486 թթ. մ. թ. ա.) կառուցուած Արքայական ճանապարհը և որտեղ յոյներն աւելի շատ կարող էին հանդիպել հայերի հետ, նշուած դարաշրջանում անկասկած «շատ փոխազական բան» կարող էր լինել, որի պատճառով էլ նրանք այդքան «շատ էին փոխաբանում»¹¹²: Ի դէպ, Եդոքսոսի նշուած տեղեկատւութեանը յարում է և, ըստ այդմ, կարող է ամբողջապէս նոյնանման մեկնաբանութեան ենթակայ լինել նաև Հերոդոտոսի յայտնի արտայայտութիւնը. «Արմենները ևս, լինելով փոխազական վերաբնակիչներ [Φρυσῶν ἄποικοι], զինուած էին փոխաբերութեան»¹¹³:

Տեղին էլ աւելի մանրամասնենք նաև այն վարկածի ներկայացումը, որի մի շարք բնութագրիչներ (պարամետրեր) շոշափուեցին վերևում: Հնդեւրոպական նախալեզուի շրջանառման գործառնարգի մասին Թ. Գամկրէլիձէի ու Վ. Իւանովի պատկերացումը համադրելով **Այրարատ – «վաղ» Ուրարտու – էթիունէ** երկրանունների զուգադրման հաւանականութեան և դրանց նշանակած տարածքում նախահայերէնի առաւել տարածուած լինելու վերաբերեալ փաստերի առատութեան դրոյթների հետ՝ նկատում ենք, որ, ըստ ամենայնի, անհրաժեշտութիւն կայ՝ լրջօրէն քննութեան առնելու հայ և օտարագրի մի շարք հեղինակների մօտ նշմարուած այն տպաւորութիւնը, ըստ որի հայերէնը, բայց իրականում՝ նախահայերէնի բարբառները (մինչև Տուշպա մայրաքաղաքի շրջակայքում վերը նշուած կոյնէի ձևաւորումը), կարող են դիտարկուել իբրև հնդեւրոպական նախալեզուի «հայրենիքից» հետագայում առանձին լեզուների ու լեզուախմբերի վերածուած բազմաթիւ բարբառների հեռանալուց յետոյ «տեղում» մնացած և այդ նախալեզուին «ուղիղ գծով» յանգող բարբառներ: Որպէս օրինակ՝ նշենք Գէորգի Կիլիկովի լեզուաբանական քննութեան ուշագրաւ եզրայանգումը. «Հայերէն լեզուի համար բնորոշ է հնդեւրոպականների մէջ ամենից աւելի մօտենալը նախահնդեւրոպական խորքային մոդելին..., այսինքն՝ ժամանակագրական այն մակարդակին, որը սովորաբար վերաբերում է մ. թ. ա. V հազարամեակից ոչ ուշ ժամանակի»¹¹⁴:

111 Տե՛ս Steph. Byz. Ethn., Ἀρμενία բառի տակ:

112 **Օ. Օ. Կարաբեյան**, *Фракийи на юго-западе армянского нагорья*, – ИФЖ, 1981, N 1, с. 231–232, ծնթ. 164: Հմմտ. նոյնի՝ Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, էջ 295–296 («Հայկական լեռնաշխարհի այն տարածքում, որտեղ մ. թ. ա XII դ. սկսած բնակուում էին նաև մուշք-թրակացիներ կամ մուշք-փոխաբացիներ, բնականաբար պէտք է խօսուէր մի այնպիսի հայերէնով, որտեղ առատ լինէին թրակերէնի կամ փոխաբերէնի տարրերը»):

113 Տե՛ս Her. VII, 73; **Հերոդոտոս**, *Պարսկաստանի ինը գրքից*, Թարգմ. **Ս. Կրկեաշարեանի**, Եր., 1986, էջ 409, հմմտ. Հայ ժողովրդի պարսկաստանի քրեպոմարիա, հտ. 1, էջ 160 (այստեղ, նոյն Ս. Կրկեաշարեանի թարգմանութեամբ՝ «փոխազական գաղութաբնակներ»):

114 **Г. С. Клычков**, *Модель глоттогенеза армян (На материале данных диахронической фонологии индоевропейского консонантизма)*, – ВОН, 1980, N 8, с. 99: Սօսաւորապէս նոյն

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Ե (ԺԱ) ԳԽԻԻ, թիվ 1 (41) հունվար-մարտ, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

Նկատենք, որ հայ էթնոսի կազմաւորման էթնոձուլախառնման (էթնո-միքսացիայի) տարբերակի և հայերէն լեզուի՝ բիաինախօս միջավայրում տարածուած նախահայերէնի կոյնէին յանգելու մասին դրոյթի հաստատման դէպքում փաստօրէն ինքնաբերաբար հերքում են Գ. Կլիչկովի այս տեսակէտն իբրև թէ վերապահելի դարձնող՝ այլ լեզուաբանների հիմնական փաստարկները: Այդ դէպքում կը կարողանայինք, առաւել յստակեցնելով տուեալ վարկածի ձևակերպումը՝ նաև մտածել, թէ Բիաինական տէրութեան կազմաւորման պահին տարալեզու աղբիւրներում վկայուած **Այրարատ – «վաղ» Ուրարտու – Էթիունէ** երկրանուն-ցեղանունների տակ ներկայանում էր մի **էթնոլեզուական մետաէթնիկ ընդհանրութիւն**¹¹⁵, որը բնորոշում էր հէնց հնդեւրոպական մայր էթնոսին յանգող (այդ էթնոսի «հայրենիքի» մի մեծ հատուածում, հետևաբար՝ պայմանականօրէն «ուղիղ գծով») ցեղերի՝ **դեռևս ընկալուող** ազգակցութեամբ:

Դա կարելի է համեմատել Վեաչ. Իւանովի ուշագրաւ եզրայանգման հետ. «Ներկայումս յայտնաբերուած այդ կարգի **[իմա՛ սեմիտների հետ առնչութիւնների – Ա. Յ.]** բոլոր տուեալների լոյսի ներքոյ միանգամայն անկասկած է թուում, որ ոչ միայն հնդեւրոպական նախահայրենիքը, այլև հնդիրանա-հայկական-յունական բարբառային ընդհանրութեան աւելի ուշ (համահնդեւրոպական ընդհանրութիւնից նրա անջատուելուց յետոյ) տարածքն անհրաժեշտ է տեղորոշել Առաջաւոր Ասիայում»¹¹⁶: Նկատի ունենանք նաև Նիկ. Յարութիւնեանի վերջին ամփոփումը. «Հայկական **[իմա՛ հայախօս – Ա. Յ.]** ցեղերն ու ցեղային միութիւնները և պետականութեան դարաշրջանի ուրարտացիները **[իմա՛ բիացիները]** ապաստանել են կողք-կողքի, միևնոյն ընդարձակ տարածքում՝ Հայկական լեռնաշխարհում»¹¹⁷:

Այս ամենի համադրութեամբ և մի փոքր էլ առաջ գնալով, առայժմ՝ գոնէ իբրև հնարաւոր վարկած, գուցէ, կարելի է ենթադրել, որ Բիաինական պետութեան մէջ համախմբուած (էթնոձուլախառնման ճանապարհով) նոր էթնոսի կողմից **էթիու-**ից ծագած **հայ-՝*հայո-** ինքնանունման ընդունումը տեղի է ունեցել ամենապարզ տարբերակով՝ այն է. ինչպէս որ **հարևան** Ատրեւստանի համար աստիճանաբար սովորական է դարձել այդ կազմաւորուող էթնոսի **Ուրարտու-Ուրարատ – Արարատ (Այրարատ)** անուանումը, որը սկզբնապէս վերաբերում էր միայն **էթիու – Այրարատ**-ին, այնպէս էլ վերջինս (**էթիու-՝*հայո-**ն) աստիճանաբար սովորական է դարձել էթնոսի նտեգրացուող բիաինական հասարակութեան **ներսում**:

Եզրայանգումը տեն **Օ. Տ. Широков**, *Армяно-греческие этногенетические контакты по данным сравнительно-исторической фонологии*, – ИФЖ, 1977, N 1, с. 85-100; նոյնի՝ *Место армянского языка среди индоевропейских и проблема армянской прародины*, – ВОН, 1980, N 5, с. 80-93.

115 Մետաէթնիկ հաւարական ընդհանրութիւնների մասին մանրամասն տեն **Н. Н. Чебоксаров**, *Проблемы типологии этнических общностей в трудах советских ученых*, – “Советская этнография”, 1967, N 4, с. 94-110; **Л. П. Лашук**, *О формах донациональных этнических связей*, – “Вопросы истории», 1967, N 4, с. 77-92; **С. И. Брук, Н. Н. Чебоксаров**, *Метаэтнические общности*, – “Расы и народы”, Вып. 6, Москва, 1976, с. 15-41 (էթնոլեզուական մետաէթնիկ ընդհանրութիւնների մասին՝ с. 17-21); **Ю. В. Бромлей**, *Очерки теории этноса*, с. 81-83.

116 **В. В. Иванов**, *Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агн*, с. 27, ծնթ. 22:

117 **Ն. Յարութիւնեան**, *Հին հայկական փեղանուններն ու ցեղանունները սեպագիր աղբիւրներում և նրանց պարմական արմատները*, էջ 182:

5. Մի քանի յարակից խնդիրներ (վերջաբանի փոխարեն)

Անցնելով ամփոփմանը՝ վերջիշենք Մ. Մկրեանի վերը նշուած եզրակացութիւնը, որն ինչ-ինչ մանրամասների բացառումով՝ բաւականին ճիշտ է բանաձևում հայ էթնոսի համախմբման մեզ հետաքրքրող գործընթացը. «Ներքին կեանքի, տնտեսական և քաղաքական զարգացման մեզ յայտնի պատկերը լիովին հիմք է տալիս պնդելու, որ Բիայնան անցել էր իր զարգացման հերոսական դարաշրջանը և... թևակոխել էր արդէն քաղաքակրթութեան դարաշրջանը: Եւ քանի որ **ազգակից ցեղերի** միութիւնը, նաև նոյնիսկ նրանց ձուլումը սկսում է դեռ քաղաքակրթութեան նախաշեմքին, ապա ոչ մի հիմք չկա ենթադրելու, որ Բիայնան ինչ-որ բացառութիւն պիտի կազմէր այդ օրինաչափութիւնից, և նրա սահմաններում չպիտի տեղի ունենար **ազգակից ցեղերի** միաձուլումը: Այսպիսով պէտք է ընդունել, որ **ազգակից ցեղերից** հայ ժողովրդի կազմաւորման գործընթացը սկսուել է Բիայնայի հզօր թագաւորութեան գոյութեան ընթացքում ու նրա սահմաններում՝ կուլտուրական և տնտեսական զարգացման պայմաններում երկրի **հնդեւրոպական աւելի մեծ և ուժեղ ցեղախմբի՝ քիայնացիների** ներգործութեամբ, և ոչ թէ, ինչպէս կարծում են, այդ թագաւորութեան վերացումից յետոյ, մեղական և պարսկական բռնակալական տիրապետութեան լծի տակ»¹¹⁸:

Իհարկէ, նորօրեայ հետազօտութիւնների լոյսի ներքոյ (մեզանում, նախ և առաջ՝ Մարգարիտ Խաչիկեանի¹¹⁹) պէտք է մերժուի հեղինակի այն դրոյթը (մեր կողմից ընդգծուած արտայայտութիւններում), թէ քիայնացիները (իր՝ **քիայնացիները**) ազգակից էին Ուրարտական պետութեան հնդեւրոպախօս-հայախօս ցեղերին (նա յենում էր Գ. Ջահուկեանի՝ տուեալ պահի հետազօտութիւնների վրայ և շտապում յոյս յայտնել, թէ դրանց շարունակումն ի վերջոյ կը բացայայտի քիայնացիների հնդեւրոպախօսութիւնը¹²⁰):

Սակայն կարևոր է նաև նշել, որ հէնց այս մերժելի դրոյթն էր պէտք կապուած է՝ հեղինակին, ճիշտ այնպէս, ինչպէս և մեր շատ ուրիշ ուսումնասիրողներին էթնոհամախմբման **էթնոմիքսացիոն-էթնոձուլախառնման** տարբերակով նոր էթնոսի կազմաւորման եղանակի անծանօթ լինելու հետ: Եւ պարզ է, որ տուեալ եղանակի ըստ արժանւոյն ընկալման պարագայում ազգագրագէտը, պատմաբանը, լեզուաբանը որևէ խնդիր չեն ունենայ նաև՝ պատկերացնելու հայ էթնոսի կազմաւորումն իրօք «Բիայնայի հզօր թագաւորութեան **գոյութեան ընթացքում**... նրա **սահմաններում**» և «մշակութային ու տնտեսական զարգացման պայմաններում երկրի ... աւե-

118 Մ. Մկրեան, *Հայ ժողովրդի կազմաւորման և հայ գրականութեան սկզբնաւորման հարցը*, էջ 35-36: Սկզբնաւորման համար հմնտ. «Բանի որ սկսած նախնադարեան համայնական կարգերի քայքայման դարաշրջանից էթնիկական գործընթացների մէջ ակնյայտօրէն գերակշռում էին էթնիկական միաւորման գործընթացները (կոնսոլիդացիա, ասիմիլիացիա, միջէթնիկ ինտեգրացիա), ապա կարելի է ենթադրել, որ «Ֆորմացիոն» մետաէթնիկ ընդհանրութիւնների վերածուելն էթնոսների հանդիսանում է էթնիկական զարգացման հիմնական միտումներից մէկը» (Շ. Ի. Բրուկ, *Н. Н. Чебоксаров, Метаэтнические общности*, с. 25):

119 Մ. Լ. Խաչիկյան, *Хурритский и урартский языки*, Ер., 1985:

120 Մ. Մկրեան, *Հայ ժողովրդի կազմաւորման և հայ գրականութեան սկզբնաւորման հարցը*, էջ 47-48:

լի մեծ և ուժեղ ցեղախումբ բիայնացիների **ներգործությունը**», եթե բիացիների ցեղախումբը այդ մասնագետները գնահատեն իբրև ոչ հնդեւրոպախոս էթնոս: Ընդ որում՝ «բիայնացիների ներգործության» լուսագոյն ապացույցներից մեկը մեր դիտարկած՝ Հայկեանների ծագման ու տարածման առասպելականացուած պատումն է, որը հայ ժողովուրդ-էթնոսի հիմնական, ծրագրային էթնոգենետիկ պատմությունն է:

Նշուած պարագայում ոչ մի հայագէտ-հետազոտող ստիպուած չի լինի խօսել Ուրարտուի «վախճանի», «անկման ու ւերակման» և «անհետացման» անյստակ գործընթացի մասին՝ շուրջ մէկ դար աշխատանքից աշխատանք «թափառող» մի պնդում, որի հիմքում շարունակում է մնալ բացառապէս այն պարզագոյն (բայց աղբիւրագիտական բաւականին ծաւալուն նիւթին կոպտօրէն հակասող) «ենթադրութիւնը», իբրև թէ Լիւդիայի դէմ Ք. ա. 590-585 թթ. պատերազմը Մարաստանը չէր կարող վարել՝ յետևում թողնելով «չնուաճուած» Ուրարտական պետութիւն. ընդ որում այդ **նուաճուած լինելն** էլ (ինքնին՝ վիճելի, տես ստորև) շարադրանքի մէջ յանկարծ թեթևօրէն վերածում է **հիմնայատակ ջախջախուած լինելու** համոզման¹²¹: Դա՛ այն դէպքում, երբ Ք. ա. Է դ. վերջի համար տարաբնոյթ աղբիւրներում արձանագրուած է նոյն Ուրարտական պետութեան (իբրև արդէն **Արարատեան թագաւորութիւն – Արմենիա – Հայք**-ի¹²²) վերստին հզօրացումը՝ մինչև Մարական ու Բաբելոնի թագաւորութիւնների հետ դաշնակցած՝ Ք. ա. 612-605 թթ. Ասորեստանեան տէրութիւնը կործանելը, իսկ Ք. ա. 594/593 թուականին Երեմիա մարգարէի կողմից Բաբելոնեան տէրութեան հզօր սպառնալիքներից մեկը ճանաչուելը՝ Մարաստանի կողքին և Միննիի (Մանայի) ու Աշկենագի (սկիւթ-սակերի) թագաւորութիւնների հետ միասին¹²³ (երբայերէն բնագրում՝ *mamləkōth*

121 Տե՛ս, օր.՝ Ի. Դեակոնովի մօտ, կից էջերում (ընդգծումները մերն են). «Այդ պատճառով եթէ, ինչպէս ինձ հաւանական է թում՝ «Ումմանմանդայի» 609 թ. արշաւանքը Ուրարտուի դէմ յանգեցրեց այդ երկրի անկախ վիճակի կորստին, ապա մենք իրաւունք ունենք խօսել այն մասին, որ Ուրարտու **պետութիւնը հպատակեցուեց [կամ՝ հնազանդեցուեց] Մարաստանի կողմից**» և «Իսկ Ուրարտու **պետութեան բուն ոչնչացումը** ներկայումս ինձ ճիշտ է թում վերագրել Մարաստանին» (**И. М. Дьяконов, Последние годы Урартского государства**, с. 38, 39):

122 Այս զուգարման օգտին հինկտակարանային տարալեզու բնագրերի և Բեհիսթունեան եռալեզու արձանագրութեան տուեալների կողքին կարևոր վկայութիւն է պահպանուել Ստրաբոնի մօտ, որի խօսքերով՝ սակերը գրաւել էին **«Հայաստանի** լուսագոյն հողը **[իմա՝ երկրամասը. «Τῆς Ἀρμενίας... τὴν ὀρίστην γῆν»]**, որին իրենց անունից թողեցին Սակասէն անուանումը» (**Strab.** XI, 14, 12, հմմտ. **Ստրաբոն**, էջ 37): Հեղինակը նկատի ունի սկիւթների՝ Ք. ա. **Է դ. կէսերով** թուագրուող մեծ, Դերբենդի անցքով ներխուժումը, որի մասին գիտէր Հերոդոտոսը («սկիւթները... շեղուեցին դէպի վերին, շատ անելի երկար ճանապարհը՝ Կովկաս լեռն ունենալով իրենց աջ կողմում: Այստեղ մեղացիները ճակատեցին սկիւթների դէմ և մարտում պարտուելով, կորցրին իրենց իշխանութիւնը, և սկիւթները տիրացան ամբողջ Ասիային». **Her.** I, 104, հմմտ. **Հերոդոտոս**, *Պատմութիւն ինը գրքից*, էջ 46): **Սակասէն-Շաղաշէն** գաւառանուան ստուգաբանութեան մասին՝ իբրև Saka-šayana – «Սակերի բնակութեան վայր», տես **И. М. Дьяконов, История Мидии**, с. 246-254: Ք. ա. Զ-Դ դարերի միջագետքեան սեպագիր վավերագրերում «Ուրարտու»/«Հայաստան»-ի յիշատակութիւնների վերջին հաւարածոն տես **М. А. Дандамаев, Клинописные данные об армянах**, – МИКЭАНСО, Ер., 1990, с. 102-106:

123 Ըստ Ի. Դեակոնովի (*Последние годы Урартского государства*, с. 31-32) Արարատեան թագաւորութեան, Մանայի և Աշկենագի տակ իբրև թէ պէտք է ընկալել ոչ թէ Մարաստանի **դաշնակիցներին**, այլ նրա **ենթականերին**, որը խիստ վերապահելի է: Ի դէպ, նոյն աշխատանքի մի այլ հատուածում (с. 38) հետազօտողն ինքն է նշում, որ նոյնպէս Ասորեստանի անկման մասին վերլիշող՝ Բաբելոնի Նաբոնիդ արքայի (555-539) «Տարեգրութիւնը» (սփիւաբեան գլանի վրայ) յիշատակում է Խառան քաղաքը գրաւած (Նիսուէի գրաւումից 5 տարի

arārāt, minni wə aškənaz, Վուլգատայում թարգմանում՝ regibus Ararat, Menni et Aschenez¹²⁴):

Առաջին դրոյթի համար այստեղ հետևում ենք Ռ. Թարումեան–Յակոբեանին և Բ. Յարութինեանին¹²⁵ ու բիաինական վերջին բնագրերի **Երիմենա** արքայի հետ համադրելի համարում խորենացիական **Արամ** նահապետին՝ իր մեծագործությունների մեծ մասով (արևելքում սկիւթներին յուշող «Նիւբար Մադէսի», հարաւում՝ Ատրեստանի զօրավար Բարշամի, արևմուտքում՝ «Պայապիս Քաադեայն Տիտանեանի» դէմ տարած յաղթանակներով)¹²⁶, չբացառելով, որ դրանց որոշ մասը կարող է վերագրուել Սալմանասար Գ-ի արձանագրություններում յիշուած՝ Բ. ա. Թ. դ. **Արամու** «ուրարտացի» արքային (ինչպէս ընդունուած էր դեռևս վաղ բիաինագիտական աշխատանքներում)¹²⁷:

Յուշելենք, որ ուշ **Ուրարտուի** մի եզակի յիշատակութիւն (**Ուրաշտու** ձևով) պահպանուել է 1923 թ. ընթերցուած «Բաբելոնեան տարեգրութեան» մէջ, որը պատմում է Ատրեստանի դէմ Մարաստանի և Բաբելոնի՝ Բ. ա. 616–605 թթ. պատերազմի մասին¹²⁸: Դա մի, ցաւօք, խիստ վնասուած հատուած է, ուր ասում է, որ երբ Նաբոպալասար Բաբելացու (625–605, կոչուած՝ «Աքքադի արքայ») 17-րդ տարում, այսինքն՝ 609 թ., Ատրեստանի վերջին արքայ Աշշուրուբալլիտը եզիպտական օգնական ուժերով Կարթեմիշից յետ անցաւ Եփրատն ու 3 ամիս պաշարեց նախորդ տարի կորցրած հիւսիսմիջագետքեան Խառան քաղաքը, այդ ընթացքում՝ «Աքքադի արքան մոտեցաւ [...] ճակատամարտը [...] Իզալա երկիրը [...] բազում երկրների քաղաքը [...]» հրի մատնեց: Այդ ժամանակ զօրքը [...] մինչև **Ուրաշտու**

անց) «Ումմանմանդայի [=Մարաստանի] **դաշնակից թագաւորների** մասին» (տե՛ս **St. Langdon, Die Neubabylonischen Königsinschriften**, Leipzig, 1912, N 1, I, 26, c. 219): Թերևս, մարաքեմենեան ճարտարապետութեան վրայ բիաինական (ուրարտական) շինարուեստի նկատելի ազդեցութիւնը ևս հնարաւոր էր միայն **յուրջ** դաշնակցային յարաբերութիւնների պարագայում:

124 Հմմտ. **Երեմ.** Ծ, 27 (յուն. Եօթանասանից թարգմանութեան մէջ՝ XXVIII, 27): Նշելի է, որ այս բնագրի որոշ թարգմանութիւններում ինչ-ինչ պատճառներով վրիպումներ են սպրդել **Միննի**-ի ընթերցման մէջ (այդ պատճառով հայերէնում՝ յունարէնի հետևողութեամբ ունենք. «Պատուէր տո՛ւք յինէն Արարատեան [տարբ. Այրարատեան] թագաւորութեանցն և Աքքանագեան գնդին...»), ընդ որում ասորական Պեշիտտայում և արաբական Թարգումում այն շփոթուել է Հայաստանի հետ («wə-darmeni wə daškənaz; hormine wəhadēb»): Դա տեղիք է տուել այլազան անընդունելի մեկնաբանութիւնների, այդ թում՝ Armenia-Harminia երկրանուան (Բեհիպոնեան եռալեզու արձանագրութեան էլամերէն տարբերակում Harminuya) ստուգաբանութեան խնդրում (մանրամասն տե՛ս **Հ. Վ. Ինգլիզեան, Հայաստան Սուրբ Գրքի մէջ**, էջ 7–8, 176–179): Ի դէպ, դրանք այսօր էլ մինչև վերջ յաղթահարուած չեն:

125 **Ռ. Յակոբեան, Հրաչեայ որդի Արամի**, – «Գարուն», 1992, N 5, էջ 78–81; **Բ. Յարութինեան, Հայաստանի, հայ-իրանական յարաբերութիւնների ... շուրջ**, Եր., 1998, էջ 25–26, 84–85: Վերջին աշխատանքի որոշ փաստարկումների քննադատութիւնը տե՛ս **Ա. Վ. Քոսեան, Արամ նահապետը Կապադովկիայում**, էջ 237–259:

126 Տե՛ս **Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց**, գլ. Ա.Ժբ–Ժդ, էջ 42–48: Հմմտ. նաև՝ Պարոյր Սկայրդդու հետ կապուած, ում վերագրում է Մարաց Վարբակէս արքայի հետ Նինուէի գրամանը մասնակցելը և Ատրեստանի թագաւորութիւնը «բառնալը» (գլ. Ա.իա, էջ 64–65): «Խորենացու երկում միննոյն հայ թագաւոր էրիմենա–Արամի պատմութիւնը բաժանուել է 2 մասի, մի մասով ստեղծելով Պարոյրի կերպարը, միսով՝ միահիստուելով Արամի կերպարին» (**Ռ. Յակոբեան, Հրաչեայ որդի Արամի**, էջ 81):

127 *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. I, Եր. 1971, էջ 480; **А. Е. Петросян, Армянский эпос и мифология**, с. 201–202.

128 Պահպանուած հատուածն աւարտում է 608 թ. դէպքերի նկարագրութեամբ:

քաղաքի շրջանը: [... **մեծ ջարդուածքից յետոյ** –] Աքքադի արքան վերադարձաւ իր երկիրը»¹²⁹: Ի դէպ, աղբիւրագէտի համար մի անթուլատրելի տրամաբանութեամբ Ի. Դեակոնովը «պայմանականօրէն» **ենթադրում է**, թէ այս բնագրի պակասող հատուածներում կարելի է վերականգնելի համարել Ումմանմանդա կոչուած մարերի կողմից Ուրաշտու **արշաւելու** (?) և այն **նուաճելու** (?) մասին միտքը¹³⁰: Ուսումնասիրողը պարզապէս շրջանցում է այլ արևելագէտների անբռնագրօսիկ ընկալումը, ըստ որի (Ն. Ադոնցի ամփոփմամբ)՝ «Ակկադի թագաւորը վստահեցնում է, որ Իզալայի շուրջը կատարուած ռազմական գործողութիւններում ինքը յաղթանակ է տարել և նոյնիսկ ընթացել է մինչև Ուրաշտուի շրջանը՝ *adi pihat*^{ALU}Uraštu: Այսինքն՝ նա թշնամուն հետապնդել է մինչև Ուրարտուի սահմանը: Ասորեստանի այն նահանգները, որտեղ նա ռազմական գործողութիւններ էր վարում, տեղաւորուած էին Ուրարտուի տերիտորիայի դիմաց, Տիգրիսից այն կողմ»¹³¹:

Մեր քննութեան առարկայ էթնոճովախառնման գործընթացը պատշաճ ընկալելու դէպքում հայագէտ-հետազօտողը ստիպուած չի լինի ճգնել՝ «յայտնաբերելու» **հայ, արմեն** եւն էթնոս-ժողովրդին հզօր Ուրարտուի ներսի կամ նրա սահմաններից դուրս՝ շատ կամ քիչ հեռու ինչ-որ անկիւններում (փաստօրէն՝ «ծերպերում», որ շատերը չեն խուսափում կոչել «բնօրրան»): Այն **հայ** էթնոսին, որն իբրև թէ կազմաւորուել էր դրանից հարիւրամեակներ կամ հազարամեակներ առաջ, բայց «ստիպուած էր եղել» տուեալ անկիւնում «ծուարելու», որպէսզի (ու մինչև) Մարական և Աքեմենեան **տիրապետութեան տակ**՝ անաչառ ազգագրագէտ-պատմաբանի համար յիրաւի անընկալելի հրաշքային տարբերակով վերածուէր մի մեծաքանակ ու զօրէղ ժողովրդի, ինչպիսին որ նրան ճանաչում են դեռևս անտիկ վաղ հեղինակները՝ Հեկատէոս Միլեթացին, Հերոդոտոսը, Կտեսիասը, Քսենոփոնը եւն¹³²:

Ի դէպ, վերը նշուած «բնօրրան»-ի ամենից շրջանառու տարբերակը շարունակում է կապուած մնալ դեռևս վաղ միջնադարից եկող ու հայագիր ամենավաղ երկերում (սկսած՝ Փաւստոս Բուզանդից) արձանագրուած այն աւանդութեան հետ, իբրև թէ հայերը սերում են հինկտակարանային Թորգոմ նահապետից (Յաբեթի թոռը, Գամիրք-Կապաղովկիան բնորոշող Գամերի կամ նրա որդի Թիրասի զաւակը, հայկական աղբիւրներում՝ Հայկ նահապետի հայրը), որը բնորոշում էր Ք. ա. Բ-Ա հազ. Թեգարամա-Թոգարմա ոչ մեծ երկիրը՝ Եփրատից արևմուտք¹³³: Սակայն ճիշտ է թում հայերին Թորգոմից ծագեցնելը համարել նոյն կարգի վաղ **գրական** յօրի-

129 Տե՛ս **C. J. Gadd**, *The Fall of Nineveh. The newly discovered Babylonian Chronicle*, London, 1923, p. 36, 42; **D. J. Wiseman**, *Chronicles of Chaldaean Kings (626-556 B. C.) in the British Museum*, London, 1956, p. 62-65: Հմմտ. **Ն. Ադոնց**, *Հայասրանի պատմություն*, էջ 281-283; **И. М. Дьяконов**, *Последние годы Урартского государства*, с. 31.

130 **И. М. Дьяконов**, *Последние годы Урартского государства*, с. 31-32.

131 **Ն. Ադոնց**, *Հայասրանի պատմություն*, էջ 282:

132 Հմմտ., օր.՝ «ասել էին, թէ նրանց [կարդուիւնների] երկրով անցնելուց յետոյ [ոյնները] կը հասնեն **Արմենիա**, որին իշխում էր Օրոնտասը և որը **մեծ ու հարուստ** [երկիր] էր» (**Xen. Anab.** III, V, 17; **Քսենոփոն**, *Անաբասիս*, Թարգմ. **Ս. Կրկեաշարեանի**, Եր., 1970, էջ 81):

133 Թեգարամայի մասին աղբիւրները և գրականութիւնը մանրամասն տես **Հ. Վ. Ինգլիզեան**, *Հայասրան Մորթ Գրքի մէջ*, էջ 210-233; **Ա. Քոսեան**, *Տոն Թորգոմայ (առասպել և իրականություն)*, Եր., 1998:

նուածք (ի յայտ եկած հաւաստի տեղեկատուութիւն չունենալու արդիւնքում և ինչ-ինչ վրիպեալ հիմքերով¹³⁴), որպիսին ներկայումս դիտուում է առաջատրասիական սկիւթ-սակերին (Iškuzāia) բնորոշող հինկտակարանային Աքանազից ծագած լինելու (առաջինը՝ Կորինի մօտ, որն, ի դէպ, դեռ չգիտի Թորգոմի մասին) **գրական** յօրինուածքը¹³⁵:

Տեղին յիշենք, որ Ք. յ. Ա դ. վերջերին յունագիր հրեայ պատմիչ Յովսէպոս Փլաիոսը «Յափեթից» սերող «Թորգոմեանների» մասին հաղորդում է այլ տուեալներ («Թիւգրամէսը [հաստատեց] թիւգրամեաններին [տարբ.] «Θοργάμος δὲ Θοργαμαίους», որոնց հելլէնները ճիշտ համարեցին **փոհիւզներ** [Φρύγες] անուանել»), իսկ հայերի համար յայտնում է մի տարբերակ, որն ինչ-որ պատճառով շրջանցուել է Ե դ. հայ մատենագիրների կողմից. «Իսկ Նորոսի երրորդ որդին՝ Սէմը, ունեցաւ հինգ զաւակ, որոնք բնակեցրել են Ասիան, սկսելով Եփրատից մինչև Հնդկաց ովկիանոսը... Արամոսի զաւակները չորսն էին, որոնցից... Հայաստանը [հաստատեց] **Ուրոսը** [«Ἀρμενίαν δὲ Οὐρος», տարբ.՝ Ὀτρος, Οὐλος]¹³⁶: Իհարկէ, գայթակղիչ է դիտարկել այս **Ուրոս** կոչուած նահապետի հետ ոչ թէ Արա Գեղեցիկի (ինչպէս արուում է երբեմն), այլ սէմալեզու գրականութեան մէջ երկար պահպանուած **Արարատ-Ուրարատ** անուան կապի հնարաւորութիւնը¹³⁷: Ի դէպ, Յովսէպոսից եկող աւանդոյթը գոնէ մասամբ թափանցել էր նաև վաղ քրիստոնեական գրականութիւն, և Եպիփան Կիպրացին (314-403 թթ.) իր «Բանք խարսխականք» («Ancoratus») երկում հայերին (Ἀρμένιοι) նշում է թէ Սէմից, թէ Յաբեթից ծագած ժողովուրդների երկար ցանկերում¹³⁸ (արդե՛ծք դրանում դեր է խաղացել Մեծ և Փոքր Հայքերի պարագան. առկայ բնագիրը թոյլ չի տալիս դա հաստատել կամ հերքել):

Ճիշտ է, վերը նշուած հօգորութեան պատմական պահից մի քանի տասնամեակ անց՝ Ք. ա. Զ դ. առաջին կէսի աւարտին մեր երկիրը՝ **Ուրարտու-Արարատ – Արմենիա – Հայք**-ը, ստիպուած եղաւ՝ պահպանելով զուտ անուանական (սոմինալ) թագաւորական իշխանութիւնը, ընդունել իր ոչ

134 Վրիպեալ հիմքերից էր, գուցէ, Թորգոմ նահապետի տարածքի ամենաարևելեանը լինելը յաբեթականների մէջ:

135 Բացառութիւն է դրա հաւաստիութեան փաստարկման նոր փորձը Ֆելիքս Տէր-Մարտիրոսովի կողմից, սակայն նա էլ, անկախ մի քանի սրամիտ դիտարկումներից, յենում է առաջատրասիական սկիւթ-սակերի թագաւորութիւնն Աղձնիք-Շուրբիայում տեղորոշելու՝ միևնոյն է, խիստ կասկածելի դրոյթի վրայ (տես **Փ. Ի. Թեր-Մարտիրոսով**, *Скифское царство в Передней Азии и исторические основы предания о Паруи́ре Скайорди как царе Армении*, – ИФЖ, 1994, N 1-2, с. 67-84. հմմտ. *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. I, էջ 432-433 (հեղ.՝ Ս. Տ. Երեմեան); **Յ. Յ. Յարութիւնեան**, *Հայասրանի, հայ-իրանական յարաբերութիւնների ... շուրջ*, էջ 53-58), որը խիստ կասկածելի է, քանի որ հիմքում ունի Մանայի տարածքի սկիւթ ցեղապետ Պարտաթուա-Պրոտոթիէսի և ըստ Խորենացու՝ առաջին հայ թագաւոր Պարոյրի անվերապահ նոյնացումը (նրանց առնչակցութեան ճիշտ մեկնաբանութիւնը տես **Յ. Կարազեղեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 275-277):

136 **Joseph. Antiquit. Jud.** I, 6, 1 (§ 126); I, 6, 4 (§ 143-145); **Flavii Josephi Opera omnia**, Post **I. Bekkerem** recognovit **S. A. Naber**, V. I, Lipsiae, 1888, p. 26, 30; **Յովսէպոս Փլաիոս**, **Գիոն Կասսիոս**, /Հին յունական աղբիւրներ. Ա/, Թարգմ. բնագրից, առաջաբան և ծանօթագրութիւններ **Ս. Մ. Կրկեաշարեանի**, Եր., 1976, էջ 56, 102, ծնթ. 129:

137 Հմմտ. բոլորովին վերջերս. «Նկատենք՝ Ուրոս (հմմտ. Uraš/Aras) անունն ընկած է Uraštu (Ուրաշտու) երկրանուան հիմքում» (**Ա. Հ. Կարազեղեան**, *Նախրի, Բիայնա, Ուրարտու և Հայք երկրանունների պոլիգլոսիայի մասին*, – ԼՀԳ, 2012, N 2-3, էջ 52-53):

138 Տես **Eriph. Ancor.**, § CXIII, 116, 117 (PG, T. 43, col. 221, 224); **В. В. Латышев**, *Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе*, Т. 1, Санкт-Петербург, 1904, с. 707:

վաղ անցեալի դաշնակից Մարաստանի տիրապետութիւնը, ում հետ միասին, ի դէպ, ըստ ամենայնի՝ հէնց է դ. վերջերին նաև ընդունել էր գրի բոլոր ձևերը մերժող զրադաշտական կրօնը¹³⁹, և դրա արդիւնքում հրաժարուելով ոչ միայն աւելի ու աւելի անհասկանալի դարձող սեպագրից, այլև նախկին սինկրետիկ դիցարանին բնորոշ «բիսիական» արքայանուններից՝ դրանք փոխարինել էր զրադաշտական-իրանական անուններով՝ **Երուանդ, Տիգրան, Շաւարշ** եւն։ Դրանից քիչ անց Հայաստանը Մարաստանից էլ «Ժառանգուեց» Աքեմենեան տէրութեան կողմից՝ վերջնականապէս կորցնելով թագաւորական իշխանութիւնը և Դարեհ Ա արքայից արքայի օրօք (522-486) դառնալով նրա 20 սատրապութիւն-նահանգներից (ըստ Հերոդոտոսի՝ Աքեմենեանների վիմագրերում դրանց թիւը նշուում է քիչ աւելի) 13-րդը, որն ընդգրկուում էր հետագայ Մեծ և Փոքր Հայքերի ամբողջ տարածքը («Պակտիիկէից, արմեններից և հարևաններից մինչև Եւքսինեան ծով»)՝ 400 տաղանդ զգալի հարկաչափով¹⁴⁰։

Ի դէպ, նորագոյն հետազօտութիւնների լոյսի ներքոյ¹⁴¹ կարելի է յաղթահարուած համարել այն ասանդական մտայնութիւնը, իբրև թէ հետագայ Մեծ Հայքի արևելեան կէսը մտել է Հերոդոտոսի նկարագրած 18-րդ սատրապութեան մէջ («**Մատիենների, սասպեյրների և ալարոդների** վրայ սահմանուած էր 200 տաղանդ հարկ»)՝¹⁴² իսկ պատմիչի նշած **ալարոդներ** եզրոյթը կարող է համադրուել «ուրարտներ» ցեղանուան հետ¹⁴³։

Իրականում 18-րդ սատրապութիւնը գրաւում էր Կովկասեան լեռներից մինչև Թռեղքի (գուցէ և՛ Վիրահայոց) լեռնաշղթայ և ապա Կուրի գետագիծն ընկած տարածքը, Կողքիսի սահմանից մինչև Կասպից ծով։ Նրա երեք ցեղերից առաջինը՝ մատիենները, կազմում էին հետագայ Վիրքի (Իբերիա) հարաւ-արևմտեան հատուածի բնակչութիւնը և հարաւում, ըստ Ք. ա. Ջ դ. հեղինակ Հեկատէոս Միլեթացու, յարում մոսխերին (հետագայի Մեսխէթում), երկրորդը՝ սասպեյրները, ըստ ամենայնի՝ կենտրոնական Վիրքի (Շիդա Քարթլի) բնակիչներն էին, իսկ երրորդը՝ **ալարոդներ** անուան տակ հանդէս էր գալիս վերջիններից արևելք՝ հետագայի Բուն Աղուանք երկրի բնակչութիւնը (Կուրի Ալագան վտակի միջնահովտից մինչև Կասպից ծով)։ Այդ անուան «րոդ» բաղադրիչը, որը յիշեցնում է իրանական՝ «գետ», «ջուր» նշանակող **ռոդ / ռուդ** բառը (rōd, ճիշտ է՝ հին պարսկերէնում այն հնչել է rautah), իբրև վարկած՝ կարելի է կապել Կուր գետի հետ, իսկ «ալա»՝ չպարզաբանուած նշանակութեամբ բաղադրիչը կարող է գնահատուել (բազմաթիւ այլ վարկածների կողքին)՝ իբրև հետագայ «Ալբանիա», «Աղուանք», «Առան», «Հէրէթ» երկրանուանաձևերի՝ նոյնպէս վերջնականապէս չպարզաբանուած նշանակութեամբ իմաստային հիմքերի հետ¹⁴⁴ ինչ-որ կապ ունեցող եզրոյթ։

139 Հմմտ. վերևում, ծնթ. 90։

140 Տե՛ս Her. III, 93; Հերոդոտոս, Պարսկաստանի ինը գրքից, էջ 197։

141 Տե՛ս Բ. Յարութիւնեան, Աքեմենեան Պարսկաստանի XVIII սատրապութեան տեղադրութեան շուրջ, – «Հանդէս ամսօրեայ», ՃԺԳ տարի, Վիեննա, 1999, էջ 45-114; Յ. Խորիկեան, Աքեմենեան Պարսկաստանի XVIII սատրապութեան մարիենների տեղադրութեան շուրջ, – ՄՄԱԵԺ, XXVI, Եր., 2007, էջ 25-35։

142 Տե՛ս Her. III, 94; Հերոդոտոս, Պարսկաստանի ինը գրքից, էջ 197։

143 Վերջին անգամ Ի. Մ. Дьяконов, Алародии, – ВДИ, 1995, N 1, с. 116-123.

144 Հմմտ. Մ. Ա. Աղաբեկեան, Սյրուգարսնական դիպրոդութիւններ «Աղուանք» տեղանուան

Սակայն չնայած անկախութեան նշուած կորստին՝ որևէ պատմական շրջադարձ այլևս անկարող էր խաթարել կազմաւորուած ու պետական մշակոյթի լուրջ ասանդոյթներ ունեցող **հայ (արմեն, ուրարտացի եւն)** էթնոսի կայուն ինքնագիտակցութիւնը (լեզուա-մշակութային-հոգեբանական ուրոյն կերտուածքի ինքնընկալումը)¹⁴⁵, որին այլևս չպիտի սպառնալի լինէին քաղաքակրթական մեծագործութիւնների ու սլարանքների միջակայքում, ցաօք, անխուսափելի քաղաքական պարտութիւնները, անկախ կարգավիճակի նոր կորուստները, պարբերական գերեվարումներն ու մասնակի տարագրութիւնը հայրենիքից և անգամ՝ մեծ զանգուածներով ուժացումը տիրապետող էթնոսների մէջ:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Summary

HISTORICAL-CULTURAL PECULIARITIES OF THE PROCESS OF ETHNIC CONSOLIDATION OF ARMENIAN PEOPLE

Aleksan H. Hakobyan

The migration paths of Hayk's descendants on Armenian Upland as described by Movs's Khorenatsi vividly remind the routes of the first Biaynian kings who conquered the territory of the future Biaynili (Urartu) kingdom in a few decades. This is a new argument to support the hypothesis of H. Karagoyzian and M. Katvalyan, according to whom the formation of the Armenian ethnos has happened by ethnoconsolidation-ethnomixation of all the various Indo-European and non-Indo-European tribes that inhabited the kingdom of Urartu-Biaynili (=Armenian Upland), and not by ethnoseparation (immediate separation of Armenian language carriers from the Indo-European language community) or by ethnoevolution (which means gradual absorption of other inhabitants of the Urartu kingdom by the small Armenian-speaking tribe). The process of ethnoconsolidation of Armenian people was a result of ethnointegration of multi-tribal Urartu kingdom and was completed in mid-7th century B. C. The later formed Armenian legend about the descendants of Hayk shows that a leading role in this process was played by Biaynians themselves, although the language of the newly formed ethnos (with the self-designation – endonym of Hay-*Hayo- – Armenians) was an Indo-European one namely, the Armenian language spoken by the relative majority of the population of the multi-tribal Biaynian kingdom. Combined with other evidences in historical sources, this legend also shows that the kingdom of Urartu was not “destroyed” by anyone; rather it continued to exist as “Eruandean Armenia kingdom”, which was conquered only by Achaemenid Iran.

Ե (ԺԱ) ԳԱՐԻ, ԹԻՎ 1 (41) ԽՈՒՆԱՐ-ՄԱՐԹ, 2013

ՎԷՄ ԽԱՆԱԿԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՐԵՆ

վերաբերեալ, – ՊԲՀ, 1990, N 1, էջ 168-177:

145 Էթնիկ ինքնագիտակցութեան համար սեփական պետութեան և հաւատքի մասին պատկերացումների դերի վերաբերեալ տես **Ю. В. Бромлей**, *Очерки теории этноса*, с. 193-194.